

ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇ

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ
ՊԱՏՄԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 1 30 ՆՈՅ. 1930 Vol. I, No. I, November 30, 1930

ՊՐԲԱԳՐԱԿԱՆ

Խ Ո Ր Հ Ր Դ Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մեր մօտիկ անցեալի սեւ օրերն ու ապրումներն դեռ մեր հոգիէն ներս կ'ստուերեն իրենց մահաշունչ պատկերները ուրուականներու նըման: Կը սաշտանք պահ մը, կը ցնցուինք այդ ահեղ օրերու քաղաքական աննկարագրելի հալածանքներն ու արհաւիրքներն մտաբերելով:

Ամբողջ Հայ ազգի ցան է այդ, դժբաղդ ազգի մը պատմութիւնը:

Կիւրիսի հայութիւնն ալ, սեւ օրերու քաղաքական ահեղ հորդաներու առջեւ քշուեցաւ կորաքամակ դէպի մահուան ու շարժարանքի արիւնոտ գոգոթան անխնայօրէն... Կրեց բըլը անուր սառապանքները, կորսնցուց իր սղնուկը եղող երիտասարդ այր մարդիկը, որոնք անմեղ գոհը դարձան անգութ թուրքի սուրբին... Հազարաւոր ընտանիքներ անտուն, անտէր որբերով աքսորի ճամբուն վրայ, աւնապատներու մէջ կմախացան ու մահացան...

Ու կորսուեցան հարստութիւն ու կայծածք, տուն ու երթիք աւերակ դարձան, մոխիրներու տակ թաղելով հայրենի տան կեանքն ու վայելքները, փառքն ու բոլոր հին ու նոր յիշատակները...

Այդ մեր սեւ անցեալն է, ուրկէ մազապուրծ ազատուածներս, թիւով շատ քիչ, յաճախ կը վերջիչենք այդ դառն օրերը:

Յիշողութիւն... ու ահա անցեալը շարժապատկերի ժապաւէնի մը պէս կը քակուի մեր աչքին առջեւ ու կ'զգանք որ մեր մարմինին վրայ կրած վէրքերը դեռ թարմ են ու կ'արիւնին:

Մեզմէ ամէն ոք իր պատմութիւնն ունի. ոմանք տխուր, ոմանք ժպտուն, մին աքսորի ճամբէն, միւսը հայրենի թոնրատան երջանիկ օրերու հեքեաթները կը պատմէ. կը լսենք յափշտակուած, երջանկութիւն կը գտնենք այդ անցեալի յուշերուն մէջ: Կը յուզուինք, կը խնդանք երբեմն, ու խօսքը կը անցնի, կը յամբանայ, կ'անհետի ստուերի մը պէս:

Ուրիշ առթիւ ուրիշ տեղ հաւատաւած են հայրենակիցներ: Կրկն հայրենի յուշեր, զգացում, երեւակայութիւն, խանդավառութիւն, եւ կրկին մուխի մը պէս անէացած:

Ինչո՞ւ այսպէս հայրենի քաղցր յիշատակները թողունք որ մոռացութեան մատնուին: Այդ յուշերն մեր պապենական տան, տոհմային, ընտանեկան, մեր նախնեաց եւ մեր կեանքի անգիր պատմութիւններն են, ինչո՞ւ մութին մէջ թողունք զանոնք:

Քանի կեանքը սերունդէ սերունդ կը կտակէ մեր ցեղային, գերզատանի, ընտանեկան անուններու ժառանգը, ուրեմն անհրաժեշտ է որ այդ անցեալի անգիր պատմու-



Թիւններն արձանագրուին, լոյս տեսնեն, կաակելու համար զանոնք հասնող նոր սերունդին, քանի ուշ է:

Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

Դժբաղդարար Կիւրինի եկեղեցական, քաղաքական կամ բարեսիրական կազմակերպութիւնները Կիւրինի հին կեանքն ու գէպերը նկարագրող յիշատակարան մը չեն թողուցած մեզի, եւ կամ եթէ ունեցած են, կորսուած ըլլալու է շատ մը թանկարժէք բաներու հետ:

Վահանեան Ընկերութիւնը, կամ Ամերիկայի նախկին Ուսումնասիրաց, յետոյ Վերաշինաց եւ ներկայիս Հայրենակցական Միութիւնը նոյն նիւթը շոշափող արձանագրութիւններ չեն ունեցած, որքան որ գիտենք:

Կիւրինցին պէտք է ունենայ Կիւրինի յուշատետր մը, հոն պատկերացնելու համար իր անցեալն ու ներկան, հոն արձանագրելու համար աշխարհի չորս կողմ ցիրուցան եղող Կիւրինցի Հայ Հայրենակիցներու ասօրեայ կեանքն ու ապրումները ու գէթ թերթի մը միջոցաւ զգացումներով իրարու մօտիկ ըզգալու համար:

Սա բոլոր Կիւրինցի Հայրենակիցներու փափաքն է:

Որպէսզի գործնական քայլ մը առած ըլլանք գէպի այդ ձեռնարկը, պատշաճ սեպեցինք թերթիկի ձեւի տակ հրատարակութեան տալ առաջին թիւը, զայն անուանելով «Կիւրինի ՅՈՒՇ», պարբերաթերթ մը, որ խնամքի ու գուրգուրանքի կը կարօտի իր առաջին քայլին:

Յաւակնութիւնը չ'ունինք երբէք թերթ հրատարակելու կոչումն ունենալու, չ'սպասելով նաեւ մեր տկար գրչին եւ միեւնոյն ատեն նիւթական անպատրաստ վիճակին: Պարզապէս

հայրենակցական զգացումէ զբոլորում, նախաձեռնարկ ըլլալով, պիտի աշխատինք անհրաժեշտ եւ օգտակար եղող այս գծուարին գործը զլուխ հանել, ապաւինելով ազնիւ զգացումի տէր հայրենակիցներուն նիւթական եւ բարոյական գործնական օժանդակութեանց:

Ուրեմն, Կիւրինի ՅՈՒՇի նըպատակը պիտի ըլլայ Ա. Ինչպէս իր անունը, բաց յուշատետր մը բոլոր Կիւրինցի Հայրենակիցներու համար միայն, հոն արձանագրելու համար իրենց անցեալի յուշերն ու ներկայի ապրումները:

Բ. Պիտի ըլլայ հաւաքածոն մեր հայրենի սան երգիքին տակ ապրելում եւ մեր պատերէն մեզի մնացած սովորութիւններու, ինքնաշատուկ բարբառը եւ գրոջմը կրող լեզուին, երգերուն ու ասացումքներուն:

Գ. Այն պիտի ըլլայ, իր կարողութեան ներսը չափով, ուսումնասիրողը Կիւրինի քաղաքական, կրօնական, կրթական, ազգային, առեւտրական եւ ժողովրդական մէջ մի խուերու յատկութիւնները վերլուծող նիւթերու:

Դ. Կիւրինի ՅՈՒՇ պիտի ըլլայ նաեւ Ամերիկայի եւ արտասահմանի Հայրենակիցներու եւ նոր սերունդի սրտին թարգմանը: Կիւրինի Հայրենակցական Միութեան գործունէութեան արձանագրողը եւ հետեւողը սմէն միջավայրի մէջ Հայրենակցական կեանքի սոնցուղարձեւումն:

Մեր այս պատմական, ուսումնասիրական եւ մասամբ գրական բաժինները կը վերաբերին անցեալին: Դժբաղդարար չենք ունեցած պատմաբաններ կամ օրագրողներ, որ կարող ըլլայինք անոնց մեզի հասցուցած թղթերէն աղբիւրներ ունենալ վերեւ յիշուած նիւթերու նկատմամբ, սակայն բարեբաղդար բար գեռ ունինք ապրող ազնիւ

Կիւրինցի հայեր, որոնց յիշողութիւնը թարմ է տակաւին Կիւրինով ու կրնան գրել կամ գրել տալ Կիւրինի ՅՈՒՇի համար:

Վստահ ենք որ ամէն ոք կարող պիտի ըլլայ կշտել սոյն պարբերաթերթի բարոյական, հայրենասիրական անկեղծ զգացումներու արտայայտութիւնն ունեցող արժանիքը եւ անոր պարտականութեան վսեմութիւնը:


Ուրեմն կոչ կ'ընենք բոլոր յարգելի Հայրենակիցներուն, բոլորւելու համար այսպիսի օգտակար ձեռնարկ մը եղող Կիւրինի ՅՈՒՇի շուրջ, անոր էջերը փայլուն ու ներկայանալի ընելու համար, նիւթա-

կան եւ բարոյական ճիգ ու զոհողութիւն չ'ինայելով:

Մէն մի անհատի գրական կամ այլ կերպով բերած աշխատանքի մասնակցութիւնը կոչումը պիտի ունենայ կազմելու նախարան էջերը փողուան Կիւրինի Գրքին, որ միակ միջոցը պիտի ըլլայ օտար հորիզոններու տակ մեր հայրենասիրական զգացումները փառ պահելու եւ աւելի կարեւոր, նոր սերունդը այդ պիտի եւ ուղղութեամբ պատրաստելու, հասցնելու համար:

Կիւրինի ՅՈՒՇը ձեր սրտի ամենամօտիկ բարեկամը թող ըլլայ, Ձեր գուրգուրանքը քաջախեղանք պիտի ըլլայ անոր:

Կ Ի Ի Ր Ի Ն



Կիւրինի ՈՒՐՈՒԱԳԻԾԸ. - Պատրաստուած առանց չափի, ցոյց տալու համար քաղերու բաժանումը, գետերու եւ առուներու ընթացքը եւ կայետու շէնքերը:

Կիւրին կը դնուի աշխարհագրական քարտէսի վրայ Փոքր Ասիոյ Թրքական Հանրապետութեան սահմաններու Սիվազի Նահանգին մէջ եւ իր անմիջական մօտիկ քաղաքները կամ գիւղերն են, Արե-

ւելքն Տէրէնտէ եւ Աշտի, Հարաւ-Արեւելք՝ Ալպիստան եւ Նաոփուղ (հին Ժամանակ Հալպի Նահանգին կը պատկանէին), Արեւմուտքն Աղիղէ: Կիւրինի շրջակայքը գտնուող Հայ

գիւղերն էին - Գարասար, երկու ժամ հե-
ռաւորութեամբ, ուր կար Ս. Սարգիս ուխ-
տատեղին, Ղալախ՝ մէկ ժամ, իսկ Գա-
րէօրէն՝ 6 ժամ հեռաւորութեամբ: Թըր-
քարնակ գիւղերն էին եւ այժմ կան Կը-
պին, Տանըլի եւ ուրիշներ:

ԿԻԻՐԻՆԻ գիւղը, ինչպէս քարտէսը կը
ցուցնէ, երկար եւ նեղ հովիտի մը մէջ
կ'երկարի Հիւսիսէն Հարաւ, մէկ ծայրէն
միւսը 2 1/2 ժամ հեռաւորութեամբ: Ուրիշ
խօսքով՝ Շուղուլի «Սեւ Ծով»էն Չախճո-
րի «Ակ»ը շրջապատուած բլուրներով:
Գիւղաքաղաքը, տարուան երեք եղանակ-
ներուն, տեղեւախիտ ծառերու, պարտէզ-
ներու մէջ կորսուած է գրեթէ, իսկ ձմե-
րան երեք ամիսները ձիւնի դժուարահալ
կոյտերու տակ ծածկուած: Ուրեմն, կլի-
մայի վերաբերմամբ, կրնանք ըսել Կիւ-
րին բարեխառն, յաճախ միօրինակ օդ-
ունի, ձմրան ածելի պէս կտրող սաստիկ
ցուրտ, գարնան մեղմ, ու անուշ ցօղա-
խառն առաւօտ եւ անձրեւախառն օդ, ամ-
րան շողրող տաք, շատ զիչ անձրեւ, եր-
բեմն սաստիկ տաք, իսկ աշնան շուտ ձմե-
րան հասնող կլիմայ:

ԿԻԻՐԻՆԻ ջուրի գլխաւոր աղբիւրներն
են Չախճորի ակը, գիւղաքաղաքի Հարաւ
Արեւելք, եւ Շուղուլի «Ծով»ը, Հիւսիսի
կողմը: Այս երկու կեղբոններէն առունե-
րով (երեք ոտք լայն եւ երկու ոտք խո-
րութեամբ) գլխաւոր թաղամասերու, եւ
առուակներով, ամէն փողոց, տուն ու
պարտէզ կը բաժնուին, թէ խմելու եւ թէ
այլ գործածութեան համար:

Այս երկու ջրերն ալ, թէեւ անուշ, զի-
միական տարբեր բաղադրութիւն ունե-
ցող ջրեր են: Այսպէս, Շուղուլի «Ծով»ի
ջուրը կահուղ է եւ ամենալաւ ու առատ
«Կարմիրխէտ» ձուկը կը պարունակէ:
մինչ Չախճորի Ակին ջուրը կարուն է եւ
առողջարար, ձուկ չունի: Փորձի համար
Շուղուլի ջուրին ձուկը բերած Ակին ջու-
րին մէջ ձգած են, չէ ապրած:

ԿԻԻՐԻՆ առատ ջուր ունի, սակայն
ջուրի ոյժ գործածող մեքենակաւորութիւնը
մուտք գտած չըլլալուն՝ չպիտի մաս մը

կը գործածուէր ընդհանրապէս ջաղացք
դարձնելու համար, Պատերազմէն առաջ,
երբ հայութիւնը Կիւրինի մէջ էր եւ իր
տան ու կարուածին աէրը: Շուղուլի «Ծո-
վ»ին մօտ Գըլպաշեանները առաջին ան-
գամ ըլլալով ջուրի ոյժ գործածող մեքե-
նաներով գործարան հաստատեցին, կեր-
պաս Փասօնի գործելու համար, սակայն
կեանքը կարճ եղաւ:

Կըլուլի թէ հին ժամանակ Կիւրինի թա-
ղամասերը բաժնուած եւ անուանուած են
եղեր իշխող թուրք ցեղապետներու կամ
պէյրու թիւին համաձայն եւ անունով,
այսպէս կոչուած են Ֆէթթահա մահալէ,
Սատըզ Աղա մահալէ, եւ այլն:

Իսկ վերջերը կառավարական թաղա-
յին գլխաւոր բաժանումները եղած են,
ինչպէս Շուղուլ, Էրան, Եաշտէփէ, Գա-
րատէփէ, Պարման Մահալէ, Սաղ, Սաս-
պաղ եւ Չախճոր: Չախճոր երեք մասի
բաժնուած է՝ Վերին Չախճոր, Վարին
Չախճոր եւ Կեղբոնի Չախճոր:

(Շարունակելի)

Յաջորդաբար պիտի գրադինք Կիւրինի
երթեւեկութեան եւ փոխադրութեան հա-
մար գտնուած ճամբաներու, փոխադր-
ութեան միջոցներու, բնակչութեան,
կառավարութեան, առեւտուրի, ներքին
արտադրութեան, ներածութեան, արտա-
ծութեան, բուսականութեան, իւր-բնու-
շիւթ թաղամասեր զատ զատ վեր առնելով
անոնց եկեղեցական, կրօնական կրթա-
կան հաստատութիւններու, սղղային
մարմիններու, Ազգ. կազմակերպութիւն-
ներու եւ մինչեւ գաղթականութեան շր-
ջանին հասնող Կիւրինի ընդհանուր կեան-
քին ու դէպքերը պատկերացնող հարցերու
շուրջ: Ուրախ պիտի ըլլանք եւ կը փա-
փաքինք որ վերեւ յիշուած նիւթերու ման-
րամասնութեան շուրջ գրողներ ըլլան եւ
մեր ձեռնարկած շահեկան յօդուածաշար-
քը գլուխ հանելու աջակցին:

Կ Ի Ի Ր Ի Ն Ը

Գրեց՝ ԹԱԴԵՈՍ Գ. ԹԱՀՄԱՋԵԱՆ

(Հետեւեալ խիստ շահեկան յօդուածա-
շարքը Կիւրինի Հայկց. Միութեան Կեդր-
վարչութիւնը մեզի տրամադրած է հրա-
տարակութեան համար: Յօդուածը գըր-
ուած է Պէյրութ գտնուող Տիար Թադիոս
Գ. Թահմագեանի կողմէ, Կեդր. վարչու-
թեան Կիւրինի պատմական գիրքը կազմե-
լու ձեռնարկին համար հրապարակ հանած
հարցարարին ի պատասխան, եւ կը պա-
րունակէ հակիրճ ակնարկներ Կիւրինի հին
ու նոր ժամանակուան քնակչութեան, այլ-
բաժնեբար, դէպքերու, առեւտրական,
կրթական, կրօնական եւ ազգային կեան-
քի այլեւայլ իրադարձութիւնները: Գրու-
թիւնը հրատարակութեան կուտանք մաս
առ մաս):

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Առանց գրաւոր փաստաթղթերու, այլ
միայն ծերերու, պառու մամիկներու ու
ակնատեսներու պատմութիւններէն քա-
ղերով, մասնաւորապէս մեր ընտանիքին
(Թահմագեան), ազգին եւ ապա Կիւրնոյ
հին ու նոր պատմութեան յատուկ իրա-
դարձութիւնները բաւական ճշգրիտ նօ-
թագրուած հաւաքածոյ մ'ունէի 1883էն
սկսեալ գրի առնուած եւ օրագրի ձեւով
շարունակուած:

Դժբաղդաբար սոյն հաւաքածոն 1895ի
պետական խուզարկութիւններէն առ ի ըզ-
գուշութիւն Եօզղաթի մէջ այրած էի, յի-
տոյ այդ հաւաքածոն վերյիշելով եւ նո-
րեր աւելցնելով Գաղատիոյ եւ Ատանայի
մէջ պատրաստուած երկրորդն ալ 1915ի
տարադրութեան շրջանին առաջնոյն բաղ-
դակից եղաւ:

Այս երկու տարաբաղդ հաւաքածոններէն
վերյիշումներս գրի առնելով ձեզի կը զը-
կեմ, յուսալով թէ ձեր պատրաստելիք
պատմագրքին մէջ օգտակարութիւն մը
եւ անոր քնննալիք պարունակութեան

վերաբերեալ հարցումներուն պատասխան
մը կրնայ նկատուիլ:

ԹԱԴԵՈՍ Գ. ԹԱՀՄԱՋԵԱՆ

Կիւրինի անունը - Ծագումն ու Թուա-
կանը.

Պատմութեան մէջ Կիւրինի շրջակայքը
գտնուող լեռներու շարքին ԿԻՐԻՆ անուն
լեռ մը կը յիշուի շատ հին ատենէն: Կը
կարծուի թէ այդ անունէն առնուած ըլ-
լայ ԿԻԻՐԻՆ անունը: Բայց մեր օրերուն
այդ անունով որոշապէս լեռ մը չէր յիշ-
ւէր, ուստի պատմական ճշգրտութեան
դէմ չմեղանչելու համար հաստատական
պատասխան մը չեմ կրնար արձանագրե-
լու: Այսպիսով քաղաքի անուանակոչու-
մը ինձի համար անորոշ է եւ կամ են-
թադրական:

Թէ Կիւրինի բերդերէն եւ թէ Սաղ
կըլուած հին թաղի մէջէն պեղումներու
ատեն երեւան եղած նշաններէն, նամա-
նաւանդ քաղաքին շատ մօտիկ գտնուող
Կիւլին գիւղի հնութիւններէն որոշակի
յայտնի է որ հնուց փառաւոր եւ բազմա-
մարդ շրջաններ ունեցած քաղաք մը ե-
ղած եւ ապա կործանուած է:

Մենք նոր վիճակին կը ծանօթանանք
մօտաւորապէս 1700 թուականին որ ատեն
Գիւղաքաղաքի եւ կամ մեծ աղաբակի մը
երեւոյթ է ունեցած երբ հայ գաղթական-
ներ եկեր ու հաստատուեր են: Այդ ա-
տենէն ի վեր ԿԻԻՐԻՆ անունով ճանչցած
ենք:

Գաղքաղ Հայերու Կիւրին Հաստատու-
իլ - Կիւրինի Ազգաբնակչութիւնը.

Շահ Ապպաս Հայաստանը աւերակ
դարձուցած շրջանին հայերու մէկ մասը
բունի Պարսկաստան տարած է եւ որուն
պատմութիւնը ծանօթ է. այդ ատենները
ահ ու սարսափէ մղեալ եւ կամ Օսմանցի-
ներու քաղաքական որոշ ծրագրի մը ար-
դեւեք ըլլալով, հայերու բազմաձաւ

մասեր Փոքր Հայք ապաստանած են: Կիւրիցիներու գաղթը եւ Կիւրիների մէջ դժուարացումները այդ շրջանին յատուկ է:

Օսմանցիները Հայաստանը դատարկելու ծրագիր մշակելով Փոքր Հայքի մէջ հայերու քիչ մը հանգիստ պարգեւած են, մինչ Հայաստանի մէջ անտանելի վիճակ երեւան բերելով ամէն տեղ ահուղողի մատնուած հայութիւնը ցրուել յաջողած են, որովհետեւ այդ թուականին 20-50 տարուայ շրջանին է որ հայերու մեծ գաղթը տեղի ունեցած է Հայաստանէն դէպի Փոքր Հայքի կողմերը: Ապա ուրեմն Կիւրիների մօտիկ շատ մը քաղաքներու, եւ գիւղերու հայութեան բազմանալը այդ շրջանէն սկսած է:

Մերայեանք, այսինքն թահմագեանները, երեք Տօրեղբոր որդիներ, երեքն ալ դատ դատ տանուտէր ըլլալով Գարապաղէն գաղթած են, բայց Գարապաղի որ գիւղէն ըլլալին որոշակի ճշդելու կարելութիւնը չեմ ունեցած: Ժամանակ մը Բաբերդ, Մերաստիա եւ իր շրջանները ու Մանճրլըզ գիւղը տասն քսան տարի մնալէ, ղեգերելէ վերջ 1745-1750 թուականներուն Մանճրլըզէն եկեր հաստատուեր են Կիւրիներ, Գարաբան, Գօշունեան, Զատիկեան, Լոռեան եւ այլն շատ մը ընտանիքներու հետ միասին:

Այդ նոր գաղթականներէն առաջ ալ տեղացի քիչ թիւով հայեր գտնուելը որոշ է: Բայց բուն կեդրոնացումը այդ շրջանին սկսիլն ալ որոշ է: Նոր հայերու այդ տեղաւորումէն առաջ Կիւրիներ մօտիկ յունարեակ Կիւրիներ անուն գիւղի բընակչութիւնը ամբողջովին եւ դէպի հարաւ հայաբնակ Գանճի գիւղը իսլամացած են: Այդ ատենները թէ քաղաքին մէջ եւ թէ շրջականները իսլամներ եւ քրիստոնեաներ կը գտնուէին միայն, աւելի պարզ խօսելով՝ թուրքեր եւ հայեր միայն կային քաղաքին մէջ: Իսկ շրջակայքը քիւրտի, աֆշարի, թուրքմէնի եւ Գըզըլպաշի այլազան ցեղեր եւ աղանդներ եւ 1864-1865ի ատենները Կաւկասիայէն եկած եւ Կիւրիների շրջականները հաստատուած են նաեւ Չէրքէզներ:

Տիրապետող Տէրէպէյիներու վերաբերումը Հայերուն հանդէպ:

1700էն մինչեւ 1850 թուականը Ալի Պէյ, Աբլֆ Աղա, Ճէթէն Սըա եւ այլն անուն տէրէպէյիներու վերին հսկողութեամբ կառավարուած է, իսկ թաղերու մէջ ասոնք ալ ունեցած են իրենց ստորագաս աղաները, որոնք իրենց թաղի հայերուն թէ կեղեքիչները եւ թէ պաշտպանները հանդիսանալով կառավարած են Օսմանեան Պետութեան անունով եւ հպատակի հանգամանքով:

Հայերը կրցած են մնայուն բնակավայր մ'ունենալ իշխող պէյերու, աղաներու իբրեւ պաշտպանութիւն, մեղմ վարուելակերպին շնորհիւ եւ կամ անոնց շահախնդրութեան պատճառաւ: Կարելի է ենթադրել, վերագրել նաեւ Օսմանեան պետութեան այդ ժամանակուայ քաղաքականութեան նպաստող որոշ ծրագրին: Հոս կարժէ որ պարզենք այդ տեսակետները:

Թաղին աղան եւ անոր մեծաւորը՝ Տէրէպէյին, միշտ հետամուտ եղած են հայոց նուէրներէն, կաշառքներէն, փոխառութիւններէն, եւ ի պահանջել հարկին՝ հայերու ծառայութենէն օգտուել զանազան եւ այլազան ձեւերով. ատոր փոխարէն շուրջաւ են իրենց պաշտպանութիւնը միշտ իրենց հասցած ձեւով բնակաւնարար, այսինքն երբ լուր տուած են թէ այսինչ թաղեցիները այսինչ թաղի հայոց ձեռած են, աղան իրեններուն հրահանգած է որ փոխարինեն կռիւը նախադրեակ եղող թաղէն հայ մը ձեռնելով: Այս եղած է պաշտպանելու կերպը աղաներու պաշտպանութեան:

Հոս կարժէ յիշել որ ընդհանուր ջարդու կոտորած չէ պատահած եւ կամ Համլեան, թալէաղ-իւլէրեան ծրագրին ծանօթացած չէին եւ կամ իբրեւ կաթընտու կով պանիրը աւելի շահաւոր կը նկատէին:

Թուրք եւ Հայ Յարաբերութիւնը. Կիւրիների բնակչութեան Հայ եւ թուրք յարաբերութիւնները, ինչպէս վերեւ յի-

չեցինք, կախում ունեցած է ընդհանրապէս տէրէպէյիներու, աղաներու բարեացակամութենէն եւ օրուայ տրամադրութենէն: Այսպէս, երբեմն ահուղողով եւ երբեմն խաղաղ շրջան մը բոլորելով իրենց նուէրներուն, կաշառքներուն, փոխառութիւններուն եւ զանազան ծառայութիւններուն փոխարէն հանգիստ վայելած են: Ճիզբախան գոյութիւնին պահելով հանգեթ՝ հետզհետէ նիւթական քարղաւածումներու ալ տիրացած են, միշտ Բայա կամ Կեափուր մնալու պայմանաւ:

Այսպէս շարունակուած է մինչեւ 1850-1860 թուականը: Անկէ վերջ եւ հետը-

հետէ հայերու վիճակը սկսած է բարելաւուել ամէն տեսակետով, պատուաւոր դիրքեր զբաւած են եւ չափով մը իբրեւ մարդ ապրիլ սկսած են թէ պետական եւ թէ անհատական կեանքի ասպարէզներուն մէջ: Այս ապրելակերպին վրայ բարեքումներ եւ աստիճանական բարելաւումներ աւելնալով քիչ թէ շատ ազգային, կրօնական, կրթական եւ առեւտրական զարգացման ոյժ տուած է Հայ Կիւրիներին, իր սեփական տուն ու տեղն ունենալով, եւ կեանքը խաղաղօրէն ապրուած քաղաքականօրէն անդորր վիճակի մը մէջ, մինչեւ 1895ի կոտորածը: (Շարունակելի)

ԿԻՒՐԻՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿ. ՆԻԻ ԵՈՐՔԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՀԻՄՆՈՒԻԼԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Յունիս 1, 1913. Պոսթոնէն Կեդրոնական Վարչութեան կողմէ պատուիրակ զրկուած է Պրն. Յարութիւն Սիրանուեան, Նիւ Եօրքի մէջ Կիւրիների Ուսումնասիրաց Ընկերութեան մասնաճիւղ մը կազմելու համար: Այդ առթիւ Նիւ Եօրքաւընակ բոլոր Կիւրիցիները ժողովի հրաւիրուած են Հայ Գաղթային Ընկերութեան սըրբահին մէջ:

Առաջին նիստի արձանագրութիւնը կը կարգանք այսպէս. -

«Յունիս 1, 1913. . . . Ժողովին ներկայ էին քսանէ աւելի հայրենակիցներ: Պրն. Սիրանուեան ներկաներուն բացատրեց իր նպատակը: Որպէսզի ժողովը օրինաւոր ըլլայ ձայնի մեծամասնութեամբ ժողովի ատենապետ ընտրուեցաւ Պրն. Վարդան Տէտէեան եւ ա. գլխի Պրն. Վահան Բիւրքճեան: Կարգացուեցաւ Պոսթոնի Կեդր. Վարչութեան կողմէ գրուած նամակը եւ Ուսումնասիրաց Ընկերութեան Ծրագիր-Կանոնադիրը: Առաջարկուեցաւ որ բոլոր ներկաներն անդամակցին եւ մասնաճիւղ մը կազմեն:

«Նոյն օրը անգամ գրուեցան հետեւեալները որոնք իբր մուտք վճարեցին մէկ

մէկ տոլար: - Ճ. Մուղամեան, Վ. Բիւրքեան, Ե. Պահատուրեան, Ա. Գրիգորեան, Կ. Տէտէեան, Մ. Դաւիթեան, Մ. Սարաճեան:

«Մուտքի դրամ եօթը տոլար յանձնուեցաւ Վ. Բիւրքեանի եւ որոշուեցաւ որ յաջորդ Կիրակի ժողով մը գումարուի Մասնաճիւղի վարչութիւն եւ դիւան ընտրելու համար:»

Յունիս 8, 1913. - Երկրորդ նիստը տեղի ունեցած է Պրն. Սարգիս Տ. Յակոբեանի սենեակը, օրակարգ ունենալով ա) Վարչական ընտրութիւն, բ) Պատգամաւոր ճամբելու հարց:

Երեք անձէ բաղկացած վարչութիւն մը ընտրուած է հետեւեալներէ. -

Ս. Տ. Յակոբեան՝ Ա. գլխ, Ճ. Մուղամեան՝ Ա. գլխի, Եսայի Պահատուրեան՝ Գանձապահ:

1913ի շրջանի համար Պոսթոն տեղի ունենալիք Պատգամաւորական ժողովի համար պատգամաւոր չճամբել որոշուած է, այլ նամակով մը մասնաճիւղի տեսակետը ներկայացնել:

Արձանագրութիւնը կը յիշէ թէ՛ «... որքան ալ որ ժողովը պատգամաւոր չճամ-

բել որոշեց, Պրն. Ս. Տ. Յակոբեան Պոսթոն երթեկեկութեան ծախքը իր անձնական միջոցներով յանձն առած եւ ներկայ եղած է Պատգ. Ժողովին:»

Յունիս 15, 1913.- Երրորդ նիստի արձանագրութիւնը չի շարունակուած անգամ ժողով է թէ վարչական, սակայն այնպէս կը հասկցուի որ վարչական ժողով ըլլալու է, ուր Պրն. Ս. Տ. Յակոբեան Պատգ. Ժողովի արդիւնքի շուրջ բացատրութիւն տուած է ներկաներուն: Մանրամասնութիւն չէ արձանագրուած, բայց կարելի է ենթադրել որ Պատգ. Ժողովը շատ յուսադրելի եւ արդիւնաւոր որոշումներ անցուցած է յառաջիկայ տարուայ դարձունէութեան համար եւ Պ. Տ. Յակոբեան քաջալերուած այդ հանգամանքէն թեւադրած է որ վարչութիւնը պատրաստուի բաց ժողով մը սարքելու բոլոր հայրենակիցներն հրաւիրելով, տակաւին ոչ անգամ Կիօրիցիներ որ կան անգամագրուին եւ մ-ճիւղի գործին զարկ տրուի հասոյթաբեր ձեռնարկներ ընելով:

Հոկտեմբեր 26, 1913.- Չորրորդ նիստի նպատակը եղած է անգամագրութեան աշխատանք: 1913ի շրջանին նոր անգամ աւելցած են.-

Ս. Հ. Աֆարեան, Ա. Կիւրեղեան, Մ. Լօճիկեան, Վ. Ֆէրմանեան:

Անդամներու համագումարն եղած է 11 անձինք:

Միամեայ դրամական հաշիւները եղած են \$12.50 ընդհանուր մուտք, գոյացած անգամական մուտքի եւ ամսավճարի գանձումներէ: Ելքի հաշիւ չեն ունեցած:

1914ի Երջան

Մարտ 15, 1914.- Առաջին նիստով նոր վարչութիւն ընտրուած է հետեւեալներէ-

Ա-պետ՝ Միհրան Ուրբեան, (այժմ Շանթունի), Ա-գլխի՝ Ա. Գրիգորեան եւ Գանձապահ՝ Ճ. Մուղամեան: Ժողովը գրադած է նաեւ մասնաճիւղի գրեկական եւ այլ պիտոյքները հայթայթելու խնդրով:

Մարտ 28, 1914.- Երկրորդ անգամական ժողովով որոշուած է վիճակահանու-

թեան ձեռնարկ մ'ընել: 20-25 տոյարի արժողութեամբ 5-6 առարկաներ գնել եւ 500 տոմսակ հատը 25 սէնթ արժողութեամբ հրատարակ հանել վաճառելու համար 'ի նպատակ կրթական գործին:

Ժողովը նկատի առած է նաեւ Նիւ Եորքի մէջ շատ մը հայրենակիցներու անտարբեր մնալը հայրենիքի այս կրթական գործին օժանդակելու մասին, որոշած է հրաւիրել զանոնք ու թեւադրել Ընկերութեան անդամագրուելու համար:

Ապրիլ 5, 1914.- Երրորդ ժողովը գրադած է վիճակահանութեան առարկաները որոշելու, գնելու եւ յարակից գործերը դասաւորելու հարցերով: Նոր անգամ արձանագրուած են.- Պրնք. Թորոս Պանտաւան, Մեսիա Թումանեան, Լեւոն Թաշեան եւ Յովհաննէս Ալոբրէշեան: Վերջինը փոխան մուտքի դրամի՝ ինքնահոս գրքի մը նուիրած է Ընկերութեան, վիճակահանութեան գրուելու համար:

Մայիս 30, 1914.- Տեղի ունեցած է վիճակահանութեան հանդէսը 'ի 406 4րդ էջ: Այս առթիւ Ա-գլխի արձանագրած է միայն.- Պրն. Վարդան Տէտեան Ընկերութեան նուիրեց իր շահած թիւը եւ զոչ սեղանի ժամացոյց մը, որու մասին ժողովը որոշեց երկրորդ անգամ վիճակահանութեան գրուելու՝ ուրիշ ոչինչ, բայց հաշիւներու արձանագրութեան կը հասկըցուի որ, 500 տոմսակներէն ծախուած է միայն 301 հատը, որմէ գոյացած է իւրաքանչիւրը 25 սէնթէն՝ \$75.25: Իսկ վիճակահանութեան առարկաներն եղած են.-

- Գրպանի ժամացոյց մը \$3.50
 - Սեղանի ժամացոյց մը արձանով 5.50
 - Հեռագրիտակ մը 4.50
 - Արդուզարդի առարկ. տուփ մը 4.00
 - Ոսկի ինքնահոս գրքի մը 2.00
 - Ոսկի զննասեղ մը50
- Համագումար վիճի. առարկ. \$19.50
 Վիճակ. տոմսերու. տպգ. ծախք 2.00
 Վիճակահանութ. Ընդհ. ծախս 21.50

Տոմսակներու Ընդհ. Մուտք \$75.25
 Վիճակահանութ. Ընդհ. ծախս 21.50

Սոյն ձեռնարկէն զուտ շահ եղած \$53.75
 Յունիս 4, 1914.- Ժողովը գրադած է տարւոյ երկրորդ վեցամեայի համար նոր վարչութիւն մը ընտրելու հարցով: Ընտրուած են Ա-պետ՝ Միհրան Ուրբեան, Ա-գլխի՝ Լեւոն Պէօզկէօթիւրեան եւ Գանձապահ՝ Ճ. Մուղամեան:

Յունիս 30, 1914.- Տիար Վ. Տէտեանի նուիրած ժամացոյցը կրկին վիճակահանութեան գրուած է եւ շահած 24 թիւը 28 տոմսակներու մէջէն: Այս հաշուով զուտ 7 տոյարի շահ մը եւս ունեցած է Ընկերութիւնը, որ արձանագրուած գումար 1915ի շրջանի հաշիւներուն մէջ:

Ժողովը որոշած է տարւոյ վերջերը ուրիշ շահաւէտ ձեռնարկ մը եւս ընել 'ի նրպատ Ուսումնասիրացի կրթական նպատակներուն:

Նոյեմբեր 22, 1914.- Վարչական ժողովը գրադուած է մօտ ժամանակին ներկայացում մը տալու ձեռնարկի պատշաճ ձեւերու, աշխատանքի եւ դրամական անհրաժեշտութեանց հարցերով:

1914ի շրջանին մասնաճիւղը նոր անգամներ ունեցած է հետեւեալները.-

Սարգիս Գ. Աֆարեան, Լ. Թաշեան, Լ. Պէօզկէօթիւրեան, Ա. Յովհաննէս, Մ.

Ուրբեան, Հ. Գապազեան, Մ. Բիրանեան, Օր. Ս. Բազուպեան, Թ. Պանտաւան, Ա. Ճըղըլեան, Կ. Թորոսեան, Յ. Ալոբրէշեան, Տ. Պահատուրեան, Ա. Բիրանեան; Օր. Ռ. Բազուպեան:

Մ. Սարաճեան, Մ. Գալիթեան եւ Վ. Ֆէրմանեան հրատարած են: Ա. Գրիգորեան քաղաքէն մեկնելուն պատճառաւ հրատարած է, որով անգամներու ամբողջ թիւը եղած է 22 անձինք:

1914ի միամեայի հաշիւը եղած է հետեւեալը.-

Մուտք՝
 Նախ. տարուան պատ. դրամ \$12.50
 Մուտքէ եւ անգամավճարներէ 31.75
 Երկու վիճակհ. գոյացած ... 82.25

Համագումար Մուտքի: \$134.50

Ելք՝
 Գրեկական պէտքերու համար \$7.90
 Վիճակահանութեան Տոմսերու 2.00
 Վիճակահան. առարկաներու 19.50
 Դրոշմաթուղթ, եւայն 2.68
 Պոսթոն Կեդրոնի զրկուած չէք 80.00

Համագումար Ելքի 112.08

Պատրաստի գումար \$22.42
 (Շարունակելի)

ԿԻԻՐԻՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ 'Ի ՊՕՍԹԸՆ

Ամերիկանակ Կիւրիցիները հայրենասիրական ազնիւ գգացումէ մը դրդուած կազմած են Ամերիկայի Կիւրիսի Ուսումնասիրաց Ընկերութիւնը Պոսթընի մէջ, նպատակ ունենալով Կիւրիսի մէջ հայ դպրոցներու հայ աղքատիկ ուսանողներու օգնել նիւթապէս եւ բարոյապէս, զարկ տալու համար նոր սերունդին դաստիարակման նուիրագործումին:

Հետագային պիտի գրադինք Ուսումնա-

սիրացի հիմնարկութեան եւ գործունէութեան պատմութիւնով, թէ զէպի իր ծրարագրած նպատակը ո՞ր աստիճան օգտակար ձեռնարկներ ըրած եւ ի՞նչ գործունէութիւն ունեցած է:

1915ի այն սեւ օրերուն, երբ Կիւրիսի հայութեան մնացորդ որբ, որբեւայրի եւ ուժաքամ եղած տարաբաղբ ընտանիքներն եւս տուն տեղ, եկեղեցի ու դպրոց թողնելով աքսորի ճամբան ձեռք առին, Կիւ-

րինը պարպուած էր հայութենէն այլեւս : Այդ շրջանին Ամերիկայի Ուսումնասիր- րացը բնականաբար վշտի ու սուգի մէջ վաղուան յոյսի մը սպասումը ունեցած է :

Զինադադարէն վերջ, երբ արիւնի ու մահուան հովիտներէն ազատուող ու վե- րապրող հայութիւնը կեանքի ու կարօտի ժպտուն յոյսը իր աչքերուն՝ երազի մը թեւերուն վրայ կը սուրբար դէպի ծննդա- վայր, վերադառնալու համար իր մայ- րենի կիսաւեր հողն ու տունը, վերածը- նունդի ու վերաշինութեան ժամը հնչած էր ուժգին՝ մեր հայրենիքի ազատագրու- մով :

Ինչպէս Ամերիկայի բոլոր հայ կաղմա- կերպութիւնները, նոյնպէս Կիւրիինի Ու- սումնասիրացը վերաշինական գաղափարը յղացած է այն յոյսով թէ՛ Կիւրիինցիներ կը վերադառնան իրենց հայրենի օձախը - եւ կոչուած է Կիւրիինի վերաշինութեան Ընկերութիւն, 1917 Սեպտ. 3ին :

Սակայն քաղաքական դէպքերու բե- րումով Կիւրիինցի գաղթականները մնա- ցած են Կիւրիինէն հեռու, մեծ մասամբ Սուրիոյ եւ Յունաստանի շրջանները, ցե- րուցան ու թշուառ վիճակի մէջ :

Վերաշինացը ստիպողականութիւն մը ունեցած է ցրուան պահանջին ու կարիքին դիմաւորելու թեւարաց : Այս պարագային Միութեան ծրագրի կամ նպատակի հե- տեւողութիւն չէր կարելի յուսալ եւ վե- րաշինացը հայրենասիրական պարտակա- նութեան զգացումով մը միայն փութա- ցած է Ազգ. մարմիններու միջոցաւ հա- ցուստեղէն եւ նիւթական նպաստ ձամբել կարօտ գաղթականներուն : Եւ ահա Մի- ութիւնը կոչուած է Կիւրիինի Հայրենակ- ցական Միութիւն, հիմնուած Ապրիլ 30, 1922ին, ի Պոսթըն : Նպատակ որդեգրելով «Կիւրիինցի հայ կարօտեալներու ընծայել նիւթական եւ բարոյական աջակցութիւն եւ մանաւանդ ստատրել որբերու խնամա- տարութեան գործին» :

Իր գործունէութեան ճշգրիտ եւ ման- րամասն արձանագրութիւնը կը յուսանք

«Կիւրիին-Յուշ» յաջորդական թիւերուն մէջ երեւի, սակայն հոս հարկ կը տեսնե՞ք յիշել որ, Ուսումնասիրացը Վերաշինու- րեան եւ վերջինս հայրենից. անուանելու եւ փոխանցման շրջաններուն հայրենա- կիցներու եւ անդամներու միջեւ տարա- կարծութիւն առաջ եկած է այս կամ այն գործունէութեան մէջ, այդ պատճառաւ Միութիւնը իր ոյժն ու թափը չէ պահած, ինչ որ նախապատերազմեան շրջանին ու նեցած է :

Համեմատաբար Հայրենակցական գոյութեան սկզբնական շրջանի տիրող կացութեան միութիւնը շնորհիւ իր գոհող- անգամներու, ուժն հաւաքած եւ որոշ ուղղութիւն մ'ունեցած է գործունէե- թեան տեսակէտով : Սակայն ժամանակ- րնթացքին այդ գործունէութիւնը եղած է եւ ներկայիս ալ է միօրինակ, անդեկ- անհրապոյր եւ միակողմանի : Թէ ինչո՞ւ : Որովհետեւ,

1.- Հակառակ որ գաղթականութեան հետզհետէ իր աշխատանքի վաստակը ինքնարու վիճակի մը հասած էր Զինա- գաղարին յաջորդող 2-3 տարուայ շրջա- նին, ուրախ ենք նոյնպէս որ այսօր ալ ինչպէս եկած տեղեկութիւններէն կ'իմա- նանք, հացի կարօտ Կիւրիինցիներ չկան : Հայրենակցականի Կեդրոնը (այսինքն Պոսթընի Մասնաճիւղի Վարչութիւնը) շարունակած է միօրինակ գործունէու- թիւնը այնպէս ինչ որ էր նպատակ անմի- ջական շրջանին : Այսինքն «տարուէ տարի որոշ դուրս մը քուէտրիկ արտասահմա- նի կարօտեալ հայրենակիցներու ի նը- պաստ», ստանց սակայն որոշ տեղեկագիրք մը կամ վիճակագրութիւն մը ունենալու աչքի առաջ, թէ որքա՞ն կարօտեալ կա- ինքնարու Կիւրիինցիներ կան այս կամ այն տեղ եւ նպատակ կարիքը ինչ համեմատու- թեամբ գոյութիւն ունի :

2.- Ինչպէս նիւ Եօրքի Մասնաճիւղի գործունէութեան արձանագրութիւնը ցոյց- պիտի տայ յաջորդիւ, չէ ունեցած ընդ- ուղղութիւն մը, ներքին կազմակերպական

աշխատանքի, մասնաճիւղային, վարչա- յին եւ գրասենեակի վերաբերեալ դրա- յումներու :

Ա.- Ներքին կազմակերպական, այսին- քըն մասնաճիւղերու միջոցաւ անդամ- գրութեան, հայրենակցական շրջանակ, Միութեան հնադէպ համակրանք եւ ե- ուանդ ստեղծելու միջոցներ ձեռք առած չէ պէտք եղածին չափ :

Բ.- Մասնաճիւղային ըսինք, որովհե- տեւ շատ մը քաղաքներու մէջ կարելի է իր մասնաճիւղեր կազմել, յետոյ գոյու- թիւն ունեցող մասնաճիւղերու ժողովի մասնակցելու ձայնի իրաւասութիւնը ճշ- դելու տեսակէտով Կեդրոնը շատ անտար- բեր դիրք մը բռնած է, այդ պատճառաւ, ինչպէս իրենց տեղեկագիրքը կը յիշէ շատ անգամ է Միութիւնը :

Նոյնպէս արտասահման, Հալէպի, Պէյրութի եւ Աթէնքի մէջ ինքնաբերաբար կազմուած Հայրենակցական Միութիւն- ները, որոնք ի վերջոյ Ամերիկայի Հայրե- նակցականի մասնաճիւղ ճանչցուած են, ըստ Կեդրոնի, մասնաճիւղային կամ շր- ջանային ինքնութիւն մը չեն ունեցած Ընդհ. Ժողովի մէջ, իրաւունք մը չէ վե- րապահուած քուէի մասնակցելու : Թղթ- թակցութեամբ ներկայացուած առաջարկ- ներ երբ եղած են, անոնք ալ Պոսթընի ան- դամներու հաճոյակատարութենէն կա- թում ունեցած են նկատի առնուելու կամ ոչ :

Գ.- Վարչային, Հայրենակցականը գո- յութիւն ունենալէ ի վեր Պոսթընը իր մասնաճիւղի վարչութիւնը չէ ունեցած եւ կամ աւելի ճիշդ է ըսել, Կեդր. Վար- չութիւն չէ եղած : Մէկ մարմին գոյու- թիւն ունեցած է «Կեդր. Վարչութիւն» անուն տակ, որ ի պահանջէ հարկին, թէ մասնաճիւղի տեղական եւ թէ Կեդրո- նի գործերը վարելու պաշտօնը կատարած է :

Դ.- Գրասենեակի վերաբերեալ աշխա- տանքի, գրուած կամ ստացուած նամակ- ներու, ընդհ. Կիւրիինցիներու անուանա- ցանկի եւ հասցէներու գասաւորում, յու-

աղբրութեան, հաշուական եւ արձանագր- րութեան կանոնաւորում չեն եղած մինչեւ հիմա :

3.- Ամերիկայի եւ արտասահմանի ընդհ. Կիւրիինցիներու վիճակագրութիւնը պատրաստելու ձեռնարկը յառաջ տարած չէ :

4.- Նկատի չէ առած դալթականութե- նէն ՚ի վեր նորահաս սերունդի կրթական ամենակարեւոր եւ անհրաժեշտ պարա- գան, այդ ուղղութեամբ որոշ ծրագիր չէ մշակած եւ ձեռնարկներ չէ ըրած :

5.- 1924էն ի վեր Ընդհ. Ժողովներու բովէն անցած որոշումները գործնակա- նացնելու աշխատանք չէ կատարած : Այս- պէս, Կիւրիինցի որբեր եւ շալագործ ար- հեստաւորներ Հայաստան փոխադրել եւ Հայաստանի մէջ Նոր Կիւրիին մը հիմնել, կամ Սուրիոյ շրջանին մէջ հասոյթաբեր արհեստակցական տուն մը հաստատել, ընդունակ ուսանողներու բարձրագոյն կրթութիւն տալ, եւ այլն :

6.- Ժամանակի պահանջին համաձայն, մօտաւոր եւ հեռաւոր նպատակներ ընդ- դրկող ծրագիր մշակելու եւ այդ ուղղու- թեամբ գործունէութիւն ստեղծելու, եւ միեւնոյն ատեն Ամերիկայի Կիւրիինցիներու ապագայի նկատմամբ հիմնական նը- պատակներ որդեգրելու ձեռնհասութիւնը չէ ունեցած :

Ուրեմն, Ամերիկայի Հայրենակցակա- նի Կեդր. Վարչութիւնը, իր գոյութեան շրջանէն ի վեր, ինչպէս յայտնի է, կա- տարած է մասնաճիւղի մը վարչութեան պաշտօնը եւ շատ անգամ բաւականացած է տեղական հանդէս-խնճոյքներ սարքելու գործունէութեամբ, միեւնոյն ատեն յա- ւակնոտութիւնը ունենալով Կեդրոնը պա- հել ի Պոսթըն :

Այս դիտողութիւնները կը լլան ի շահ Միութեան, իրեւ Միութիւն իր կոչու- մին, վարդացման եւ առաջադրած նպա- տակներու իրագործման համար միայն : Անհատական արժանիք վիրաւորելու դիտում չկայ բնաւ : Մէն մի գիտակից եւ քիչ թէ շատ Միութեան գործին, մօտէն

հետաքրքրուող հայրենակից արդարացի պիտի գտնէ վերեւ եղած դիտողութիւնները:

Հոս չմոռնանք յիշելու, որ նոյնքան եւ աւելի թերացում եւ անպարտաճանաչութիւն կայ մեր հայրենակիցներու քով քացառութիւնները յարգելով, որոնք առհասարակ անտարբեր վերաբերում մը ունեցած են դէպի Միութիւնը եւ պէտք եղածին չափ չեն քաջալերած զայն:

Եթէ պատճառներ կան, պէտք է այդ խոչնդոտները վերցնել եւ հարթել ճամբան. այդ ընելու համար աւելի գործնական է եւ սպասուած արդիւնքը կուտայ, երբ իւրաքանչիւր անդամ կամ ոչ անդամ հայրենակից ժողովներուն մասնակցելով իր ձայնը եւ առաջարկը լսելի կընէ նպատակայարմար ծրագիր մշակելու եւ աւելի արդիւնաւոր գործունէութիւն առաջ բե-

րելու հարցերու շուրջ, քան միշտ հեռու եւ մեկուսացած զիրք մը բռնել:

Հետեւաբար, իւրաքանչիւր Կիւրինցի, հայրենասիրական զգացումով ինքզինքը հայրենակցական Միութեան մէկ անդամը նկատելով, անդամական լիակատար իրաւասութեամբ մը պարտք զգալու է իր Միութիւնով հետաքրքրուելու, նախանձախնդիր ըլլալու անոր յառաջդիմութեան համար, զոհելու եւ ամէն ջանք թափելու է որ այն Կիւրինցիներուս զուրգուրանքին, դնահաստանքին եւ քաջալերանքի արժանի Միութիւն մը ըլլայ:

Քանի ուշ չէ, հայրենակիցներ, ամփոփենք մեր ուժն ու կորովը Միութեան շուրջ, զօրացնենք զայն, այսօրուան եւ վաղուան անակնկալ պարտականութիւններու առջև պատրաստ ըլլալու համար: Նիւ Եօրթ
Ո.Ն.ՄԱԿԱՐԵԱՆ
Յուլիս 1, 1930

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

ԿԻԻՐՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿ.ՄԻՈՒԹԵԱՆ 1929 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ԵՒ

18ԳԻ ԸՆԴՃ. ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ ՊՈՍԹՈՆ

Միութեանս Ութերորդ Ընդհ. Անդամական Ժողովը գումարուեցաւ Յունվար 5, 1930, Պոսթոն: Ներկայ էին 27 երկսեռ անդամներ չորս ձայնով: Տրուեցան հետեւեալ որոշումները:

1.- Կարգացուեցաւ նախորդ տարուան Ընդհ. Ժողովին արձանագրութիւնը. քանի մը յանձնարարով վաւերացուեցաւ:

2.- Կեդր. Վարչութիւնը ըրաւ իր բարոյական եւ նիւթական համարատուութիւնը, որու մասին եղան բաւական քըննադատութիւններ, բայց ընդհանուր առմամբ գոհացուցիչ նկատուեցաւ:

3.- Անցեալ տարուան մէջ Կիւրինցի կիներու փափաքին գոհացում տրուելով Տիկնանց Մասնաճիւղ մը կազմուած էր, վաւերացումը ձգելով Ընդհ. Ժողովոյ, եղած ընտրութիւնը օրինաւոր գտնուելով

վաւերացման քուէ տրուեցաւ, եւ որոնք պիտի գործեն իրրեւ Պոսթոնի տեղական մասնաճիւղ:

4.- Տիկնանց Մասնաճիւղին կողմանէ առաջարկ բերուած էր որ տիկին անդամուհիներու տարեվճարը ըլլայ երկու տուրք փոխանակ երեքի եւ մուտքը ձրի: Թեր ու դէմ վիճարանութիւններէ վերջ ընդունուեցաւ 12ի դէմ 17 քուէներով:

5.- Նիւ Եօրթի Մասնաճիւղէն ներկայացուցիչ չէր զրկուած ժողովին, ոչ ալ տեղեկագիր, միայն մէկ նամակ կար՝ Մասնաճիւղի վարչութեան երկու անդամներուն կողմէ գրուած, որոնք գանդատ կը յայտնէին Կեդր. Վարչութեան եւ Միութեան ներկայ եւ անցեալ ընդհանուր գործունէութեան մասին եւ այդ պատճառ կը համարէին իրենց մասնաճիւղի ներկայ ջը-

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

ԿԻԻՐՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 1929 ՏԱՐԻՈՅ

Միութեանս Ութերորդ Ընդհ. Անդամական Ժողովը գումարուեցաւ Յունվար 5, 1930, Պոսթոն:

Ինչոր անդամները եւ առ հասարակ ընտրու Կիւրինցիները տեղեակ պահելու համար Միութեանս անցեալ չըջանի գործունէութեան, հոս կուտանք համառօտ ամփոփումը նախորդ Կեդր. Վարչութեան՝ Ընդհ. Անդամական Ժողովին ներկայացուցած տեղեկագրին:

Նախորդ տարուայ Ընդհ. Անդամական Ժողովը գծած ըլլալով իր հետեւելիք ուղղութիւնը՝ Կեդր. Վարչութիւնը ջանացած է ըստ կարելոյն այդ որոշումները գործադրել յօգուտ Ընկերութեան:

1.- Որոշուած ըլլալով Պոսթոնի մէջ մասնաճիւղի վարչութիւն մը կազմել անջատ Կեդր. Վարչութեանէն, շատ մը փորձերէ վերջ կարելի եղած է երեք անդամներէ բաղկացած վարչութիւն մը կազմել, որոնք քանի մը ամիս միայն շարունակած են, սարքած են մէկ հանդէս-ինչոյց, ուսուցից դասընթաց է կոկիկ հասոյթ: Յետոյ դանապան առարկութիւններով հրատարած են եւ Կեդր. Վարչութիւնը ստիպուած է վարել տեղական գործերն եւս: Ուրիշ անգամներ եւս ասանկ փորձեր եղած են բայց ցաւալի է որ կարելի չըլլար Պոսթոնի մէջ մասնաճիւղի վարչութիւն ունենալ օրէնքի համաձայն եւ այդ ուրիշ մասնաճիւղերու դիտողութեանց պատճառ կըլլայ:

2.- Պոսթոն գտնուող Կիւրինցի կիներու փափաքին գոհացում տալով՝ կազմուած է Տիկնանց Մասնաճիւղ մը, որ անմիջապէս եւ անողով գործի սկսած է: Տրուած է թէ յատկան մը նոր անդամուհիներ շահելու համար: Արդիւնքը շատ քաջալերական եղած է: Ներկաները սիրայօժար մասնակցած են: Երտակը դնահաստեղի եւ գովելի է տիկնանց ցոյց տուած այս հետաքրքրութիւնը՝ օգտակար հանդիսանալու օտար երկիրներու մէջ դանուող մեր գըծ-

խտուած դրութեան: Կեդր. Վարչութեան բացատրութիւններն եւս լսելով՝ Ընդհ. Ժողովը շատ ցաւ զգաց որ անցեալին մէջ այնքան եռանդուն գործունէութեամբ գործող Նիւ Եօրթի Մասնաճիւղը այդ վիճակին հասած է: Որոշուեցաւ որ նորընտիր Կեդր. Վարչութիւնը ամէն միջոց ի գործ դնէ կարելի գոհացումը տալու, ի հարկին մէկ կամ երկու պատգամաւորներ զրկուին՝ անհասկցողութիւններուն դարման մը գտնելու համար:

6.- Կարգացուեցան Հալէպէն եկած թղթակցութիւնները, նաեւ մասնաճիւղի վարչութեան ինը ամսուան տեղեկագիրը, որ օրինաւոր եւ գոհացուցիչ գտնուեցաւ: Նամակներուն մէջ կային անցեալ չըջանի կազմուած Շահապաշտպան Ընկերութեան կողմէ գրութիւններ, որոնք կը բողբէին անցեալ վարչական կազմին դէմ իբրեւ թէ հաշիւ տալէ կը խուսափին, ասոնց դիմումներուն վրայ վարչութիւնը ընդհ. Ժողով գումարած, հաշիւները տեսած չիտակ գտած եւ նոր ընտրութիւն եղած էր, որով Ընդհ. Ժողովը այդ խնդիրը փակուած նկատեց: Որոշուեցաւ որ նոր վարչութեան որ ջանայ սիրաշահիլ գանգատողները եւ անհասկացողութեանց անիթ շտայ սպազային:

7.- Միութեանս Պոսթոնի անդամներէն Պր. Պօղոս Հալաճեան Ժողովին ներկայ ըլլալով՝ խոստացաւ որբ ուսանողի մը իբրեւ տարեկան ծախս 125 տուրք վճարել չորս տարուան համար, ընտրութիւնը ձգելով Կեդր. Վարչութեան: Ժողովը ծափահարութեամբ ընդունեց այս ազնիւ խոստումը եւ շնորհակալութիւն յայտնեց:

8.- 1930 տարուայ համար պիւտճէ սորոշուեցաւ 1000 տուրք, մեծագոյն մասը պիտի յատկացուի կրթական գործին:

9.- Նոր Կեդր. Վարչութեան ընտրութեան ձեռնարկուեցաւ եռանուն ցանկ մը պատրաստուելով: Ընտրուեցան հետեւեալք.- Պրնք. Երուանդ Շահապաշտպան, Յարութիւն Սիրանոսեան, Սորէն Զուլփեան, Տիգրան Աֆարեան եւ Լեւոն Հէքիմեան (հրատարած):

բախտ որբերուն եւ անկարողներուն: Ներկայիս Տիփլիսի մասնաճիւղը ունի 28 անդամուհիներ:

3.- Ընդհ. Անդամական Ժողովին կողմէ որոշուած ըլլալով պատմական գրքի մը պատրաստութեան համար պէտք եղած քայլը առնել՝ Կեդր. Վարչութիւնը այդ ուղղութեամբ գործի սկսած է եւ հարցարան մը պատրաստելով բոլոր մասնաճիւղերու եւ կարող հայրենակիցներու զըրկած է, խնդրելով որ իրենց ծանօթ նիւթերու վրայ գրեն եւ Կեդրոն զրկեն: Բայց ցաւալի է ըսել որ ցարդ ոեւէ գրական արդիւնք չէ տուած եւ այդ ինչը իրականանալէ դեռ շատ հեռի է, Կիւրիսի մասին բոլոր հին արձանագրութիւնները կորսուած ըլլալուն պատճառով:

4.- Անցեալ շրջանի տեղութեան Կեդրոնական Վարչութեան եւ Պոսթոնի Մասնաճիւղի Վարչութեան կողմէ տրուած են չորս հանդէս-խնճոյք, թէյասեղան եւ դաշտահանդէս: Զուտ հասոյթ գոյացած է \$556.00: Անշուշտ ասոնց ամէնուն կարգադրութեանը համար Կեդր. Վարչութեան բոլոր անդամները ամէն շանք թափած են որպէս զի Ընկերութիւնը օգտուի: Միշտ յարաբերութեան մէջ է եղած մասնաճիւղերու հետ եւ տրամադրուած պիտոճէն եղած խնդրանքին համեմատ բաժնած: Ծատ ուրախալի պարագայ մըն է որ անցեալ շրջանէն սկսեալ արտասահմանի մասնաճիւղերէ օգնութեան խնդրանքները եղած են մեծ մասամբ կրթական գործի համար, կարօտ տղայոց նախնական կամ երկրորդական ուսում հայթայթելու նպատակով եւ զրկուած դրամները յատկացուած են այդ նպատակին:

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Մինչեւ 1930 Յունուար 5

ՄՈՒՏՔ

| | |
|---|--------|
| 1928 Սեպտ. 24 նախ. վարչ. փոխ. \$4350.24 | |
| Թէյասեղանի զուտ հասոյթ | 142.48 |
| Հանդէս-խնճոյքէ | 218.13 |
| Դաշտահանդէսէ | 112.17 |
| Հանդէս-խնճոյքէ | 84.64 |

| | |
|----------------|--------|
| Անդամավճարներէ | 356.00 |
| Պանքայի տոկոս | 284.69 |

| | |
|------------------------------|-----------|
| Գումար | \$5548.35 |
| ԵՆԲ | |
| Հայէպի մասնաճիւղին զրկուած | \$400.85 |
| Աթէնքի մասնաճիւղին զրկուած | 150.35 |
| Պէյրուսի մասնաճիւղին զրկուած | 200.00 |
| Քարտուղարին վճարուած | 100.00 |
| Այլեւայլ ընթացիկ ծախքեր | 123.00 |
| Պանքը պտր. 1930 Յունվ. 5 | 4573.55 |

| | |
|--------|-----------|
| Գումար | \$5548.35 |
|--------|-----------|

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

Հայրենակցական Միութիւնն ունի եօթը մասնաճիւղեր, որոնց երկուքը Միացեալ Նահանգաց մէջ -- Պոսթոն եւ Նիւ Եօրք, իսկ հինգը՝ արտասահման -- Հալէպ, Պէյրուս (Սիւրիա), Աթէնք (Յունաստան), Լիօն (Փրանսա), Արժանթին (Հարաւ. Ամերիկա):

Նիւ Եօրք

Նիւ Եօրքի մասնաճիւղը, շատ ցաւալի է ըսել, անցեալ շրջանին գործունէութիւն չէ ունեցած: Ընդհ. Անդամական Ժողովին ներկայացուցիչ չէր զրկած, ոչ ալ տեղեկագիր: Եկած նամակներէն եւ Կեդր. Վարչութեան տուած տեղեկութիւններէն դատելով՝ որոշ յայտնի եղաւ որ նախորդ տարիներու մէջ իրենց ներկայացուցած առաջարկներուն չընդունուելը եւ գանազան խնդիրներու շուրջ իրենց արգարացի բողոքներուն անլսելի մնալը թէ՛ Կեդր. Վարչութեան եւ թէ՛ Ընդհ. Ժողովի կողմէ՝ պատճառ եղած են մասնաճիւղի անդամոց մեծամասնութեան մեկուսացման: Նիւ Եօրքի մասնաճիւղը որ նախկին տարիներուն այնքան եռանդուն եւ արդիւնաւոր գործունէութիւն ցոյց կուտար, ներկայիս սպասողական դիրքի մը մէջ է:

Հալէպ

Կիւրիսի գաղթականներու մեծամասնութիւնը կը գտնուի հոս: Մասնաճիւղը

ունի մօտաւորապէս 80 անդամներ: Իրենց վերջին տեղեկագիրը որ 13 Հոկտ. 1929 թուականը կը կրէ, կուտայ նաեւ իրենց ութամսեայ հաշիւը: Ուրախալի է որ հոն եւս նիւթական օգնութեան կարօտ հայրենակիցներ չունինք. ամէնքն ալ ապրուստ մը կը ճարեն զանազան միջոցներով: Այնտեղի օգնութեան գործը եղած է երկու ուղղութեամբ.

1.- Կիւրիսիցիներ մեծ մասամբ քէմբերու մէջ կը բնակին վճարելով տարեկան վարձք մը: Մասնաճիւղի Վարչութիւնը մասնաւոր շրջանակի մը մէջ գտնուած ամբողջ քէմբը տարւոյն սկիզբը վարձելով աւելի նպաստաւոր պայմաններով, մեր հայրենակիցներու գիւրութեան համար, անոնց կը տրամադրէ եւ ինք վարձքը կը դանձէ շարաթափճարներով, ի հարկին պակասը ինք լրացնելով:

2.- Կրթական -- Հայէպի Հայկազեան Վարժարանի հոգաբարձութեան հետ համաձայնութեան եկած են իւրաքանչիւր աշակերտի տարեթոշակ 110 դր. օսկեգրամ վճարելու, եւ իրենք ծնողներէն կը դանձեն եթէ ի վիճակի են, իսկ անկարողներուն թոշակը կը վճարեն դանձէն ինչպէս նաեւ կուտան ձրի դասագիրք:

Նիւթական հաշիւ ութամսեայ շրջանին՝

| | |
|----------------|----------|
| Ընդհ. Մուտք | Գան. փր. |
| Ընդհ. Ելք | 21432 51 |
| | 18663 01 |
| Պատրաստ գումար | 2769 17 |

Պէյրուս

Պէյրուսի մասնաճիւղին անցեալ շրջանի տեղեկագիրը դեռ չենք ստացած: Իրենց թղթակցութիւններէն քաղուած տեղեկութեանց համեմատ օգտակար գործունէութիւն ունեցած են: Հոս եւս բա-

ւական թուով Կիւրիսիցիներ կան եւ ոչ մէկը նպաստի կարօտ: Տեղական հասոյթները եւ Կեդրոնէն դացած դրամը յատկացուած են գրեթէ ամբողջութեամբ կրթական գործին, այսինքն նախնական կամ երկրորդական դպրոց յաճախող Կիւրիսիցի ուսանողներու օգնութեան:

Լիօն

Այս մասնաճիւղը կազմուած է անցեալ տարուայ շրջանին Փրանսայի հայաշատ կեդրոններէն Լիօնի մէջ. ներկայիս ունին 32 անդամ եւ անդամուհիներ. եռանդուն կը գործեն: Բաւական թուով հայկ. պատի օրացոյցներ մէջտեղ հանած են լաւ պատրաստուած, ուսկից դոյացած է կոկիկ հասոյթ մը: Կեդրոնի հետ յարաբերութեան մէջ են:

Արժանթին

Արժանթինի մասնաճիւղէն մէկ անամակ ստացուած է անցեալ շրջանին, որով կ'իմացնեն թէ իրենց հասոյթները հաղիւ տեղական պէտքերուն բաւելուն՝ Կեդրոնին նիւթական օգնութիւն չեն կրնար ընել, հետեւաբար միայն բարոյական կապ մը պահել կ'ուզեն:

Աթէնք

Աթէնքի մասնաճիւղէն երկար ատեն է թղթակցութիւն չկայ, ոչ ալ տեղեկագիր: Կանուխէն եկած նամակներէն դատելով՝ հոն եւս դրամական օգնութեան կարօտ Կիւրիսիցիներ չկան: Կեդրոնէն զրկուած օգնութիւնը եւ տեղական հասոյթները գործածուած են կրթական գործին:

Ահաւասիկ ներկայացնելով Միութեանս անցեալ շրջանին ունեցած գործունէութեան համառօտ պատկերը, շատ կը փափաքինք եւ կը թելադրենք որ ամբողջ Ա-

մերիկայի մէջ գտնուող Կիւրինցիներ հե-
տաքրքրուին Միութեան գործերով: Ինչ-
պէս կ'երեւի, այնքան ալ միմիջարկան
չէ ներկայիս: Միացեալ Նահանգաց մէջ
այսքան Կիւրինցի ըլլալով միտոն՝ Մի-
ութեան գրտմարան շատ անձուկ վիճակ
մը սնի: Ամբողջ Կիւրինցիներ երբ գի-
տակցութեանը ունենան իրենց նորտա-
կանութեան՝ հանդէպ աւելի աննպաստ
պարտականութեան մէջ գտնուող իրենց հայ-
րենակիցներուն եւ յանձնուող ըլլան տա-
րեկան շատ փոքր զոհողութեանց, Ընկե-
րութեան կարող պիտի ըլլայ շատ աւելի
փայլուն երեւան դալ: Ուստի կը թելադր-
ենք որ ընդ որ այն վայրերը որ բաւական

թուով Կիւրինցիներ կան, կազմակերպու-
ւին եւ Կեդրոնին հետ յարաբերութեան
մտնեն: Վարչութեան միշտ պատրաստ է
ի նպատակ Միութեանս եղած բոլոր շար-
ժուաները քաջաբերել եւ ամէն գիւրութեան
ընծայել:

Ներկայ Շրջանի
Կեդր. Վարչութեան Կազմը
ԵՐՈՒԱՆԻ ԾԱՀՊԱՉԵԱՆ՝ Ատեմապետ
ԽՈՐԷՆ ԶՈՒՂՃԵԱՆ՝ Ատեմապետ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԻՐԱՆՈՍԵԱՆ՝ Գանձապահ
ՏԻԳՐԱՆ ԱՖԱՐԵԱՆ՝ Խորհրդակալ

ԿԻՐԻՆԻ ԼՍՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒ ԾԱՀՊԱՉՏՊԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ
Հ Ա Լ Է Պ Ի Մ Է Ջ

Կիւրինցիներ որ Հալէպի մէջ գոյու-
թիւն ունին «Կիւրինի Հայրենակիցներու
Շահագործողան Միութեան» մը, որուն
կազմութեան շարժաւիթը եղած է Կիւրի-
նի Հայրենից Միութեան Հալէպի Մաս-
նաճիւղի 1928-1929 եւ 1929-1930 շրջան
ներու վարչութեանց եւ կարգ մը անհատ
Կիւրինցիներու միջեւ ծագած մասնաճիւ-
ղային հաշուական տեղեկատուութեան
հարցերու շուրջ եղած թիւրիմացութիւ-
նը:

Հալէպի «Եփրատ» թերթի մէջ երեւ-
ցած բաց նամակներէն եւ Կ. Հ. Միու-
թեան Կեդր. Վարչութեան ուղղուած Շա-
հագործողան Միութեան Մարտ 30, 1930
թիւ նամակէն — ստորագրուած Ա. պետ՝
Վարդան Շէշիրեան եւ Ա. դպրո՞՞ր՝ Տիգրան
Զննողեան — կ'եղբակցիները որ Մասնա-
ճիւղի հաշիւները քննելու համար յանձ-
նախուճ մը ընտրուած է Իսրայէլ Կի-
պիւրեան եւ Երուսղէ Թիւմպուլեան անձե-
րէ Հալէպի Միջհայրենակց. Միութեան
Վարչութեան ներկայութեամբ եւ առա-
ջադրութեամբ. սակայն ի վերջոյ Միջ-
հայրենակցականը երրորդ անձի մը ներ-
կայութեան հաշիւները քննած եւ վաւե-

րացուցած է առանց վերեւ յիշուած եր-
կու Կիւրինցիները հրաւիրելու:

Ասոր վրայ Պրն. Կիպիւրեան «Եփրատ»
15 Յունիս 1930 թիւին մէջ հե-
տեւեալ բաց նամակը ուղղած է Միջհայ-
րենից Միութեան Վարչութեան, Հալէպ.
«Ա. — Երբ ձեր հրաւերին պատասխանելով
փութացինք քննիչի պաշտօնը ստանձնել,
ինչո՞ւ Պ. Սէլեան՝ «նամակով մը ձեր
միւս ընկերները եւս կանչենք եւ միասին
եկէք» ըսելով մեզի արգելք եղաք եւ
քանի մը օր վերջ իրեքորական ընկ-
պաշտօնեաներէն մին կանչելով հրաժար-
եալ Վարչութեան հաշիւները քննել տը-
ւիք:

«Բ. — Երբ քանի մը հայրենակիցներու
հետ բացատրութիւն պահանջելու համար
Պ. Սէլեանի մօտ գացինք՝ ի՞նչ բանէ
մղուած այս պարոնը անպատկառ խօսքե-
րով ընդհ. Կիւրինցիները անարգեց:

«Գ. — Ինչո՞ւ կը վարանիք մեր անցեալ
վարչութեանց հաշիւներու վերաքննու-
թիւնը մեր հայրենակիցներու յանձնել,
երբ մեր վերջին ընդհ. ժողովին՝ ձեր
երեք անդամներու ներկայութեամբ եւ
Պ. Սէլեանի նախագահութեամբ 1927 շր-

ջանի մեր ընդհ. ժողովի տուած որոշու-
մը ձեր կողմէն եւս ընդունուելով արձա-
նագրուեցաւ ու այդ հաշիւները վերա-
քննելու համար չորս անձերէ բաղկացեալ
մարմին մը ընտրելու պաշտօնը ձեզ արը-
ւեցաւ:

«Դ. — Երբ մեր վերջին Ընդհ. ժողո-
վին՝ վարչութիւնը իր բարոյական եւ
նիւթական տեղեկատուութիւնը ընելէ
վերջ, իր կատարած զոհողութեանց հան-
դէպ հայրենակիցներուն մէջ ծագած

կացեալ ստուար Միութեան մը, որ մին-
չեւ Բաղաք. ժողովին կրկնակ բողոքա-
գրեր մատուցած էր, առանց բողոքողնե-
րէն մէկն իսկ լսած ըլլալու, օտարի մը
տուած տեղեկագիրը օրինաւոր կրնա՞յ
ըլլալ:

«Այս ամէնը թուելով հանդերձ, կը
յուսայի որ հրաժարեալ վարչութիւնը
մասամբ օրինաւորութեան սահմանի մէջ
գործել ստիպուած էր եւ իր հաշուետը-
ւութեան մէջ Կիւրինցիներէն խուսափելու



Կիւրինցի էժէներ Հալէպի Բեմքիմ մէջ

կարգ մը դժգոհութիւններուն ցաւ յայտ-
նելով իր հրաժարականը ներկայացուց,
կը հարցնենք ձե՛զ:

«1. — Օտար մը Կիւրինցիներու բարո-
յական գործունէութեան տեղեակ կրնա՞յ
ըլլալ:

«2. — Ինչպէ՞ս կրնայ հաստատել թէ
այդ գործերը անաչառօրէն կատարուած
են: 3. — Ինչպէ՞ս կրնայ հաստատել թէ
վարչութիւնը ծրագիր — կանոնադրէն
դուրս, ինքնակամ չէ գործած:

«4. — Դրամական գործառնութեանց
մէջ կրնա՞յ հաստատել թէ ծախսուած
գրամները արժանի տեղեր գործածուած
են:

«5. — Երբ 45-50 հայրենակիցներէ բաղ-

արգելք մը չունէր, բայց պէտք է ըսել
թէ ձեր այս տարօրինակ քայլը մեր հայ-
րենակիցներու մէջ ծագած կասկածները
ա՛լ աւելի զօրացնելու առիթը ստեղծեց:

«Ես գրեցի այսքանը՝ որպէս սրտցաւ
եւ Կիւրինցիական գործերէ տեղեակ մի
հայրենակից, հանրութիւնը տեղեակ պա-
հելու այս կնճռոտ անցուղարձերուն՝ իսկ
առանց բուն աղը թէ ուրիշ բխած է ի
հարկին կ'անդրադառնամ յետագային:

ԻՍՐԱՅԷԼ ԿԻՊԻՆԵԱՆ

Սոյն նամակը անպատասխան մնացած
է. իսկ Կ. Հ. Միութեան Հալէպի Մաս-
նաճիւղի վարչութիւնն ալ հակառակ ընդ-
հանուր ժողովի որոշման տակաւին հա-

չինները չէ ներկայացուցած, որուն պատճառները մեզի անձանօթ են:

Կը յուսանք մինչ այժմ համերաշխօրէն կարգադրուած է սոյն խնդիրը եւ կը յուսանք նաեւ որ Կ. Հ. Միութեան Հալէպի Մասնաճիւղը եւ Հալէպի Շահապաշտպան Միութիւնը ի մի ձուլուած հայրենասիրաբար տեղական գործերուն ընթացք կուտան անշահախնդրօրէն, յօգուտ Կիւրիցի հայրենակիցներու եւ յօգուտ Միութեան զարգացման:

Վ Ա Ր Դ Ա Ն Ը

(Կիւրիցի 1914ի դէպքերէն պատկեր մը)

Երկար հետապնդումներէ եւ ձերբակալութիւններէ ետք, տակաւին անյայտ կը մնար Վարդանի թագաւորը: Իբրեւ կատակածելի կուսակցութեան մը պարագրուելը՝ կառավարութեան համար անհրաժեշտ էր զինք գտնել եւ տիրանալ բոլոր այն գաղտնիքներուն զորս կը կարծէր ըլլալ իր մօտ:

Քաղաքը իրարանցումի մէջ էր: Վարդանի բնակած թաղը պաշարման վիճակ յայտարարուած էր. ոստիկանութիւնը՝ տուն տուն, Վարդանը հետապնդելու պատրուակով՝ խփռութիւններ եւ յափըտակութիւններ կընէր: Քէմիլի համար՝ Վարդանը միակ արժէքը կը ներկայացընէր միւս հազարաւոր ձերբակալներու քով, ու ամէն անգամ երբ անյաջող դուրս կուգար իր հետախուզութիւններէն՝ ամօթահար եւ վրիժախանձ՝ անիկա իր ցատուճը կը թափէր Վարդանի գերդաստանին վրայ: Ամէն օր, անխնայ ծեծերու եւ նախատինքներու տարափին տակ՝ կանացի աղիողորմ ճիչեր կը լսուէին անոր տունէն:

Վարդանի լուր հասած էր կացութեան մասին: Իրեն համար գիւրիկն էր անհասանելի մնալ զինք հետապնդողներէն, բայց ներքի չէր իրեն՝ ուրիշներու տառապանքը լսել՝ իր անձին ապահովութեան համար: Ուստի որոշեց կացութիւնը փրկել ամէն գնով: Անիկա յայտնեց կառավարութեան թէ կը յանձնուի միայն

այն պարագային երբ ձերբակալութիւնները եւ անտեղի խոչտանգումները դադարեցուն:

Այս լուրին վրայ՝ անոնք որ Վարդանի խնդրով դատապարտուած էին, ազատ արձակուեցան: Հազարապետ Քէմիլի իր գումարտակ մը զինուորներով փութաց ընկճել Վարդանը եւ իր խումբը զոր բազմաթիւ կը կարծէր: Երկարատեւ հրացանաձգութիւններուն անվրէպ կը պատասխանէր Վարդանի խումբը՝ բազմաթիւ զոհեր պատճառելով իր թշնամիին: Վերջը երբ ապստամբներու զէնքերը լքուեցին եւ զինուորները անվարան Վարդանի բերդը յառաջացան, Վարդան անյայտացած էր անկէ, ուր միայն երեք ընկերներով զիմադրած էր կատարած Քէմիլի վոհմակներուն: Հաղիւ Վարդան իր տունը հասած էր, երբ բախին մէջ լքուեցաւ Քէմիլի ձայնը, անիկա զինուորներով եկած էր իր գայրոյթը թափելու Վարդանի անպաշտպան կնոջ վրայ:

Սակայն այս անգամ Վարդան իր պարթեւ հասակը ցցեց անոնց աչքերուն դէմ, խորխու ու պատկառելի երեւոյթով մը՝ անիկա յառաջացաւ դէպի հազարապետը եւ արհամարհական նայուածք մը ձգելէ ետք՝ զէնքերու թնդիւնին եւ ծուխերու մէջէն ուրուականի մը պէս անյայտացաւ, կրկնապէս սարսափի ու ապշութեան մատնելով հազարապետն ու իր խումբը:

Վարդան անձամբ կառավարիչին քով երթալով անձնատուր եղած էր: Յաջորդ օրը, բանտին երկաթեայ վանդակներուն ետեւ շղթայակապ՝ կը հարցաքննուէր հազարապետ Քէմիլին: Այս վերջինը պատեհ առիթը գտած ըլլալով՝ նախ փորձեց անասելի խոչտանգումներու տակ՝ խոստովանցնել զինք, ապա... «Ինչո՞ն անի՞ծեմ այս ըմբոստ կեպուռոյն»: Երկու շարաթիւրու անխնայ ծեծերն ու տանջանքները ի դերեւ հլած էին եւ կարելի չէր եղած տակաւին դադանիք մը կորզել իրմէն: Սովահար ու ծեծերու տակ հալուածա՛ տակաւին կը յամառէր գաղտնի-

րի նշույլ մը տալ իր ընկերներուն եւ իրենց ծրագրի մասին: Իր հուժկու եւ տիրտան կազմը կմախացած էր, եւ գրեթէ ուշքը կորսնցուցած: Անոր այս յամառութենէն ձանձրացած՝ գիշեր մը, Քէմիլի փորձեց ապահովութեան սուտ երաշխիքներ տալ՝ իրեն եւ իր կնոջ կեանքի մասին, եթէ ան խոստովանէր կարծեցեալ գաղտնիքները: Չո՛ւր փորձ: Ու այս անգամ, Քէմիլի սրածայր դանակ մը հանելով մօտեցուց զայն Վարդանի կոկորդին՝ սպասելով վերջին պատեհութեան: Սակայն, Վարդան լուռ էր եւ անշարժ: Դահլճը միտք դանակին ծայրը աւելի խորունկ եւ իր գործը չի լրացուցած՝ յանձնեց Վարդանը՝ պահակներուն, սպասելով հաւանականութիւններու լոյսին...:

Տեղակալին տղան ինծի ծանօթ ըլլալով՝ իրմէ խնդրեցի կերպ մը գտնել Վարդանի մօտ երթալու համար: Իբրեւ ուսանող ընկեր մը անիկա այդ խնդրանքիս գոհացում տուաւ: Կեանքիս ամենատրժէքաւոր վայրկեաններէն մէկը եղաւ այն պահը, երբ Վարդանի խոցը այցելեցի: Գերեզմանային լուսիւն մը կար հոն, եւ ես պահ մը սոսկացի, խորհելով թէ Վարդան մեռած էր արդէն: Պահակներու հսկողութեան տակ յառաջացաւ եւ իր վսեմ ճակատը համբուրելու բոցէկիս Վարդան իր աչքերը բացաւ, բայց դժուար թէ զիս ճանչցաւ, սակայն այցելու հայու մը ներկայութենէն քաջաբերուած գառնօրէն ժպտաց:

Երկար չէի կրնար մնալ իր մօտ, Վարդան չէր կրնար խօսիլ, իր կոկորդը բա-

ւական խորունկ կտրուած էր: Միակ հարցումիս թէ ի՞նչ պէտք է հազարգեմ դուրսիններուն, անիկա հաղիւ լսելի փոխուցով մը իմացուց ինծի թէ աւելի հանդիսա է հիմա քան երբէք... «Մահէն չեմ վախնար ու ոչինչ չեն կրնար լսել ինձմէ, դուրսիններուն բարեւ ըրէ, թող վստահ ըլլան այդ մասին, կարծեմ կեդրոն պիտի տանին մեռցնելու» ու դարձեալ ժպտաց... Ես նկատեցի որ անիկա ինքզինք վարձատրուած կ'ըզար նուերական գործի մը համար տառապելով եւ մահանալով:

Յունիսի պայծառ առաւօտ մը, երբ բնութիւնը հրաշալիօրէն գեղեցիկ է եւ արեւուն ճառագայթները կեանք ու աւելն կը սիւնեն ամէն կողմ, ու միայն մարդիկ կը յանդգնին սրբապղծել բնութեան այդ վսեմութիւնը՝ իրենց գազանային արարքներով, հոն, Սեբաստիոյ Գաւաթ Եպարի դաւարիքին վրայ, զէնքերու հարուածներուն տակ ինկաւ Վարդան՝ ձեռքը անմոտուիկ մը ծղոտին երկարած՝ փակելով իր աչքերը արեւու վերջին ճառագայթներուն տակ...:

Վարդանի մահէն վերջ, անոր աքսորուած կինը զուակ մը ունեցաւ, որուն անունը Վարդան դրաւ: Այն ատեն, յիշելով Վարդանի հեղինակն ու ժպիտը՝ տառապանքին ու մահուան դէմ, ըմբռնեցի անոնց իսկական իմաստը որ կը ճառագայթէր իր հոգիէն, լուսաւորելով մութ ու խոնաւ պատերը իր բանտին:

ՅՈՎՀ. Պ. ՄԻՆԱՍԵԱՆ

Տ Օ Ն Ա Կ Ա Ն Օ Ր Ե Ր

ՆՈՐ ՏԱՐԻ

Հայրենի տան ընտանեկան ապրումներու, սովորոյթներու եւ տօնական երջանիկ օրերու քաղցր յիշողութիւնները մեր սրտերը կը համակեն երբ ամէն տարի տօնի օրեր կուգան ու կանցնին:

Օտար երկնքի տակ կապրինք. օտար է

հողը, ջուրը, երկինքը, աստղեր, մարդիկ, լեզու, եւ օտար ամէն ինչ, անհրապոյր եւ լռնապըտսիկ են կարծես եւ տօնական օրերը:

Երեւադայութեամբ անհատուած փափաքն ու կարօտը կուենանք մեք պայենական խրճիթին տակ ապրելու եւ

զգալու վերապահ երջանկութիւնը այն բո-
լոր անցած լաւ օրերուն...:

Պահ մը Կիւրքին երթանք: Նոր Տարիի
օր:

Աստու կանուխ մութնուլուսին հար-
սընցուններն կամ նորահաս աղջիկները
կապ կապ չոր տէջկերներն աղբիւրին
ջուրին մէջ թռչած, Ոսկի Խնձորը գտնողը
գտած եւ մուրաղին համոզը հասած է:

Նոր Տարիի Կիրակի է: Կազանդ է-
ամէն տուն, ամէն ընտանիք հարուստ
կամ աղքատ իրենց տաքուկ թոնիրին
շուրջ խմբուած Կազանդը կը տօնեն:

Դուրսը ձիւնը օրերով եկեր, իր թան-
ձրը ճերմակ սավանը ծածկեր է ամբողջ
գիւղ, քաղաք, լեռ ու դաշտ: Տանիքներն
ձիւնի ծանրութեան տակ կը կքին:

Հիմա չձիւնէր, օդը պայծառ է եւ
տաք, արեւը իր ճառագայթները կը
խրէ ձիւնի սառ հատիկներուն մէջ: Կը
հալի ձիւնը տանիքներու վրայ, փողոց-
ներու մէջ հոսուն փոքրիկ առուակներ
կազմելով:

—Քա զատատ առնիմ, Պտիկ, Խան-
տուտ Ապլան կը ձայնէ, տեները կը կա-
թէ կօ, վազէ հէմը վազէ, Աջապլենց
թին բեր որ ծինը քերենք:

Ու կը քերուին տանիքները, ձիւնի
խոշոր կոյտեր կը թափուին փողոց, անց-
քը կը գոցուի գրեթէ:

Թաղի տղաք խումբով փողոց են լեց-
ւած, ձիւնէ զնգակ կը խաղան, ուրիշներ
մէկ մէկ տուրակ ձեռքերնին տուն տուն
պտտելով կազանդ կը հաւաքեն:

—Կազանդնիս տուէք, Կազանդ է Կա-
զանդնիս տուէք, կը ձայնեն՝ տան դու-
ռը դարնելով:

Տան տիկինը կերեւի դուան սեմին վը-
րայ ուրախ, Ժպիտը դէմքին, կազանդ-
չէքը կը լեցնէ իւրաքանչիւրին տուրա-
կը: Տղաքը ուրախութեամբ կընդունին
ու կը վազեն ուրիշ տուն մը, եւ այսպէս
տուրակներն լեցնելով կը վերադառնան
իւրաքանչիւրը իր տունը կազանդչէք հա-
ւաքած ըլլալու հաճոյքը վայելած ըլլալ-
ուն համար:

Իրիկուն է, կազէ լամբաները կը վառ-
ւին. տունը լուսաւորուած է. թոնիրին
վրայ զարդարուած է սեղանը տեսակ տե-
սակ չոր պտուղներով, չինիներու մէջ
լեցուած, տէփէ տէփէ, հոն են Պաստեղը
ու Քէմէն, չոր թուփն ու Ջիրը, Կըտ-
մէջն ու Բլորը, Ղըթմէլմէնան ու Ղէսի
Կուտը, չամիչն ու լէպլէպուն, ընկոյզն
ու քէստէնէն եւ ինչէ՛ր ինչ է՛ր... ու
այդ բոլորին մէջտեղ օղիին շէշը մանր
բաժակներով...:

Տան անդամներ ու հիւրեր, բոլոր-
ւած այդ համեղ ուտելիքներու շուրջ,
ուրախ զուարթ կերուելուս կընեն:

—Է՛, Հաճաղա, Հաճիմէր, չնորհաւոր
Նոր Տարի, Աստուած ամէն տարի այս
օրը հասցունէ, երկար կեանք եւ երջա-
նիկ օրեր պարգեւէ:

—Ամեն:

—Տուներնիդ շէն ըլլայ, Աստուած
ամէն մարդու մուրազը տայ:

—Ամեն:

—Աստուած աշխրջիս խաղաղութիւն,
գործի ալ յաջողութիւն տայ:

—Ամեն:

—Ձեր եւ մեր բոլորին կենացը:

—Անո՛ւշներ:

Եւ կը պարպուին գաւաթները իրարու
ետեւէ, օրհնութիւններու ու անուշներու
սրտարուխ մաղթանքներով:

—Հաճիմէր, խմէ, խմէ, մէկ դէտէֆ
խըմէ, դուրպաթ գացած տղայ ունիս,
Արթինին կենացը խմէ:

Հաճմէրին աչերէն արցունքի կաթիլ-
ներ կը գլորուին իր թառամած այտերն
ի վար, բայց երջանիկ է իր միւս մարդ-
հասակ զաւակներով, թոններով ու
հարսներով ու կը խմէ Արթինին կարօ-
տը սրտին:

Ժամերը կանցնին ուրախ երգի ու
խաղի մէջ մոռացումով մը: Իէս գիշերն
անցեր է: Խորոզը կը խօսի:

Գիշեր է. դուրսը ցուրտը սաստկացեր
է, փողոցները եւ առուներու ջուրերը
ամբողջ սառեր են, օլօխներէն երկար սը-
լածայր սառոյցէ սուրեր կախուեր են:

Ձիւնի վրայ գայլէ հեաքեր կը տեսնը-
ւին. գայլ է իջեր գիւղը:

Լամբարի աղօտ լոյսը հիւրերը ճամ-
բու կը դնէ:

Ներսը, տաքուկ թոնիրին շուրջ, սան
անդամները կը քնանան յողած կերու-
ելուսէն:

Ձիւթախաղաթ թուղթով թղթուած
փոքրիկ լուսամուտները կը ճերմկին.
լոյսը կը բացուի: Տան կատուն միայն
արթուն սենեակին մէջ այս ու այն կողմ
թափած ընկոյզի կեղեւներու խշխշոցը կը
հանէ...:

ՀԱՅՐԵՆԻ ԻՄ ԵՐՁԱՆԻԿ ՏՈՒՆ

Մտերիմ Ընկերոջս՝
Ս. ԳԱՅՆԱՔԱՆԻ

Երբ բնութիւնն ինձ շնորհեց հոգի
Ազգաուն էակ մ'աչեքս բացի...

Մայրիկ իմ գրտո
ձանցնալէ յետոյ
ձանցնայ բու կապոյտ երկիւնքը անհուն
Դուն իմ հայրենի, ո՛հ երջանիկ տուն:

ձանցնայ բու բակի ծառերն ու ծաղիկ
Որոնց շուքին տակ դրաւ իմ մայրիկ,
Մանկութեանս օրրանն
Թռչուններդ միւ միւ
Խօսիլ ուսուցին եւ վարպետը սիրուն
Ժպիտ տուին ինձ, իմ Հայրենի Տուն:

Քու բակի առուակն մտերիմ էր ինձ
Կանաչներուն մէջ մշտապես ու ջինջ
Կարկաչիւնն անուշ
Երգել ինձ ուսոյց.

Կը յիշեմ ջուրի խաղիս օրն ի բուն
Մանկութեան օրայ, դուն Հայրենի Տուն:

Պարտեզներու մէջ կամ երգիքիդ տակ
Օրերն, տարիներն անցեր են ըշտապ
Կեանքէն, աշխարհէն
Դեռ ես անձանօթ.

Օտար երկնի տակ նանցնայ օրրութիւն
Ու մեծցայ հոն որք, իմ հայրենի տուն...

Պանդուխտի դաժան նամբէն ալ յոգնած,
Մարդասակ հոգիս եեզ է կարօտցած...
Քու շէմն ու բու քար, բու երդիքդ կուգեմ
Քու հոգն ու բու ջուր,
Նախնեացս օրհնութիւն
Թող կրկին տեսնեմ ու ապրիմ՝ բու տուն
Դու իմ հայրենի, ո՛հ երջանիկ տուն...:

Մարտ 2, 1930
Նիւ Եարք Խ. Ն. Մ.

ԿԻՒՐԻՆՅԻ ԳԱՂՈՒԹԸ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Ամերիկայի այլ եւ այլ քաղաքներու
մէջ հաստատուած Կիւրինցի բնակչու-
թեան նկատմամբ, ըլլայ հայրենակցա-
կան, ընտանեկան, առեւտրական, կեան-
քը եւ մշակոյթը, աճումն ու նուազումը
չօշափող հարցերու շուրջ գրելու համար
անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ որոշ
արձանագրութիւններ, վիճակագրական
տուեւաններով:

Գծադրաբար չունինք այժմ որ եւ է
աղբիւր, բայց հարց ու փորձով ու այս
կամ այն հայրենակցի սուած տեղեկու-
թիւններուն ճշգրիտ կարծուած մանրա-
մասնութեանց վրայ հիմնուելով պիտի
աշխատինք մաս առ մաս գրադիլ վերեւ
յիշուած շահեկան նիւթերով:

Առաջին անգամ բնականարար հետա-
քըքրական պիտի ըլլայ մեզի համար ծա-
նօթանալ թէ ո՞ր թուականին Կիւրինցի-
ներ Ամերիկա եկած են եւ ինչ պայման-
ներու տակ, հեազհեաէ ո՞ր շրջանին ս-
ւելի ստուար համեմատութիւն մ'ունեցած
է Կիւրինցիներու թիւը Ամերիկայի մէջ:

Երկրորդ, ի՞նչ եղած է անոնց առօր-
եայ կեանքն ու գործը. հայրենասիրական
ի՞նչ սղի ցոյց տուած են անոնք դէպի
իրենց ծննդավայրը նախապատերազմեան
շրջանին. ի՞նչ եղած է եւ է յետպատե-
րազմեան ու ներկայի ընդհանուր կացու-
թիւնը տարազրեալ հայրենակիցներու
հանդէպ:

Ասորեւ տալիք մեր յուշագրութեան

հակիրճ ակնարկը կը վերաբերի ընդհանրապէս Ամերիկայի եւ մասնաւորապէս Նիւ Եօրքի Կիւրիւնցիներու. ի մտի ունենալով որ նաեւ հետագային պիտի անդրադառնանք այլ եւ այլ շրջանի կամ քաղաքի Կիւրիւնցի բնակչութեան յիշատակաբուժեան:

Այսպէս, մեզի կը պատմեն թէ, 1885 թիւէն առաջ առաջին անգամ Ամերիկա եկող Կիւրիւնցիները եղած է Տօք. Նահապետ Ապտալեան, որ բժշկական ուսումը Լրացնելով վերադարձած է երկիր: Կը կարծուի թէ Տօք. Ապտալեան Ամերիկեան քաղաքացի եղած է, քանի որ ըստ Պրն. Յ. Սիրանոսեանի, քաղաքացիութեան թուղթը եւ բժշկութեան վկայականը Սիւլազ Մարանեաններու քով պահեստի տրուած եւ յետոյ Կիւրիւնցի գացած է:

Տօք. Ապտալեան 1895ի դէպքին դարձուած է:

Կրտսի թէ, Քէհեանեան անուն Կիւրիւնցի մը շատ առաջ Ամերիկա եկած է եւ թէքաս Նահանգի կողմերը հաստատուած, երկար ժամանակ առանձնացած կեանք մը ապրած է հայութենէ: Օր մը պատահամբ Նիւ Եօրք կը գտնուի եւ ներկայ կըլլայ հայկական ժողովի մը, ուր Սուրէն Սուրէնեան կ'ատենախօսէ եղեր: Ժողովէն վերջ Քէհեան եւ Սուրէնեան իրարու կը ծանօթանան:

—Քու խօսակցութեան ձեւէն եւ բաներէն, կըսէ Քէհեան, կուսեցի որ դուն Կիւրիւնցի ես, ես ալ Կիւրիւնցի եմ:

1885-1896 թուականներուն Ամերիկա եկած են Համբար Դաղտողեան, Սարգիս Պոռձակեան, Մկրտիչ Բիւրճեան, Վարդօ Ինճեան, Գալուստ Պոռձակեան, Յովհաննէս Ալարմըճեան, Ճըզըլեան Եղբարք, որոնք Կիւրիւնցի գացած եւ 1895ի դէպքին զարնուած են. Մանուէլ Վրանեան, որ Կիւրիւնցի գացած է 1897ին, ամուսնացած եւ կրկին Ամերիկա եկած է:

1896ի շրջանին, Տօք. Ապտալեանի թերազրանքով, հետզհետէ Ամերիկա եկած են Ս. Ժամկոչեան, Մանուէլ Պա-

րոնեան, Մանուէլ Կիւրեղեան, Համբար Մակարեան, Պէօրէճիկեան:

1895ի դէպքէն առաջ Կիւրիւնցիները եղած է Պրն. Սուրէն Սուրէնեան, Ժամանակ մը Լօնտօն մնացած է կուսակցական գործիչի պաշտօնով, քանի մը անգամ Ամերիկա եկած, վերադարձած է. 1905ի շրջանին վերջնականապէս հաստատուած է Նիւ Եօրքի մէջ:

1890-1897ի շրջանին Ամերիկա հասած են Յովհաննէս Մէֆիլեան, Սիւրբաբ Մակարեան, Պոռով Միխայեան, Մանուէլ Պաշխաչեան, Յարութիւն Սիրանոսեան, Ստեփան Բանեան, Յովհաննէս Վարդապետեան, Պուլիարիա գացած 1900ին եւ հոն մեռած, Յակոբ Թէրճէնեան, Պետրոս Պոռձակեան, Սուրէն Սուրէնեան, Սիմոն Զամուրեան եւ ուրիշներ:

1900ի շրջանին եկողներն եղած են Տիգրան Շահապեան, Տօք. Աբրահամ Շահապեան, Ղեւոնդ Շահապեան, Յովհաննէս Շահապեան, Տիգրան Հայկուհի Ապտալեան երեք զաւակներով, Թորոս Ղէմեան, Պաշտուր Ղէմեան, Կարապետ Ղէմեան, Կարապետ Կոստիկեան, Աղեքսանտր Բիլիբեան, Նահապետ Բիլիբեան, Սեդրակ Թորքոմեան, Սմբատ Բիրանեան, Աւետիս Պայրամեան, Ղեւոնդ Պայրամեան, Միհրան Գոչունեան, Մատթէոս Մակարեան, Վարդան Տէտէեան:

1905ի շրջանին եւ Մասնաւորութեանէն վերջ 1909ին Ամերիկա եկողներն եղած են մեծ մասամբ ամուրի երիտասարդներ, իսկ ոմանք ամուսնացած կամ նշանուած, ընտանիքներ Կիւրիւնցիներու մը ապահովելու եւ վերադառնալու նպատակաւ: Ուրեմն, այս շրջանին եկողներն, Եսայի Պահատուրեան, Պահատուր Պահատուրեան, Տիգրան Պահատուրեան, Թորոս Պանտեան իր ընտանիքով, Յակոբ Մէֆիլեան, Երուանդ Զախմախեան, Վահան Ալիսնեան, Բրօֆ. Ռուբէն Բազուպեան, Արշակ Պէօզիկեան, Սարգիս Տէր Յակոբեան, Պօղոս Հալաճեան, Վարդան Տէտէեան, Կոստան Տէտէեան, Տիգրան Պէօճիկեան, Կարապետ Մուղամ-

եան, Ղազար Էնթիքէճեան, Գրիգոր Մակարեան, Լեւոն Հէքիմեան, Վարդան Ֆէրմանեան, եւ ուրիշներ:

1908ին՝ Ղեւոնդ Վարդապետեան, իսկ 1909ին՝ Տիգրան Փեփրոն Բազուպեան եւ իր երկու աղջիկները Ռէբեգա եւ Անթառամ Բազուպետեաններ:

1910-1913ի շրջաններուն քաղաքական աննպաստ պայմաններու բերումով Կիւրիւնցի երիտասարդութեան մէկ մասը աշխատած է անցնիլ արտասահման, շատեր հասած են Ամերիկա եւ կեդրոնացած Նիւ Եօրքի եւ Պոստլնի մէջ: Այսպէս 1910ի շրջանին՝ Գրիգոր Պահատուրեան, Ենովք Գաղանճեան, Աւետիս Տէտէեան, Լեւոն Տէր Յակոբեան, Վահան Բիւրճեան, Արամ Տօնիկեան, Դաւիթ Տօնիկեան, Յարութիւն Տատուրեան, Մարտիրոս Տատուրեան, Յակոբ Աբրահամեան, Գալուստ Մէֆիլեան, Կարապետ Զամուրեան:

1912ին՝ Արմենակ Բիրանեան, Մանասէ Սաւաճեան, Սիմոն Ճըզըլեան, Երուանդ Ճըզըլեան, Ռուբէն Սողոմոնեան, Մկրտիչ Թոփալեան, Լեւոն Շահապեան, Յովհաննէս Ղալաճեան, Մկրտիչ Ղալաճեան, Ենովք Գարեան, Արամ Գարեան, Արմենակ Ճըզըլեան, Սահակ Շահապեան, Յարութիւն Շահապեան, Լեւոն Ապտալեան, Սեբովքէ Թոփալեան, Պաշեր Վարդապետեան, Թորոս Վարդապետեան, Սարգիս Տէր Աբրահամեան, Գրիգոր Վէլիբեան, Զանօ Մուղամեան, եւ այլն:

1913ի շրջանին Ամերիկա հասած են Տիգրան Տատուրեան, Կարապետ Թորոսեան, Աբրահամ Գրիգորեան, Յակոբ Գրիգորեան, Յովսէփ Պահատուրեան, Համբարձում Գապապեան, Մկրտիչ Փիրանեան, Մկրտիչ Բիրանեան, Սարգիս Աֆարեան, Յարութիւն Աֆարեան, Մեսրոպ Պրթիկեան, Կիրակոս Պէկիրճեան, Արմենակ Պէկիրճեան, Երուանդ Շահապեան, Պոռէն Զուլճեան, Նարեկեան Եղբարք՝ Նշան եւ Թորոս, Տիգրան եւ Յովհաննէս Մէնտիլեաններ, Կարապետ Շահապեան, Արմենակ Կիւրեղեան, Միհրան Բիրանեան, Ստեփան Քէչիչեան եւ ուրիշներ:

Վերեւ յիշուած անուններով լիակատար ցանկ մը կազմած չենք ըլլար, քանի որ դեռ կան շատ մը ուրիշներ, որոնք հոս յիշուած չեն իրենց մասին տեղեկութիւն չունենալու համար: Իսկ հոս յիշուածներուն ոմանց Ամերիկա ժամանումը թուականը թերեւս ճիշդ չէ, բայց վերլուցելով զաղափար մը կունենանք հին Կիւրիւնցի գաղութի մասին: Կիւրիւնցի ՅՈՒՇ ձեռնարկած է ընդհանուր վիճակագրութեան մը: Յաջորդական թիւերով տեղ պիտի տանք Ամերիկայի Կիւրիւնցիներու անուանացանկին, հասցէներուն, Ամերիկա հասնելուն եւ քաղաքացի ըլլալուն թուականներու մանրամասնութեանց:

Նախապատերազմեան շրջանին Նիւ Եօրք կամ այլուր գտնուող Կիւրիւնցիները մեծ մասամբ գործաւորութեամբ զբաղած են. ոմանք ալ անձնական մանրամասնութիւնները գործերով: Հին ժամանակուայ Ամերիկայի գործադրութեան եւ նիւթական սագնապալի շրջաններուն Կիւրիւնցիներու կեանքն ու ապրելակերպը նկարագրելու կը թողուք անոնց, որոնք ապրած են այդ շրջանը, աւելի հարազատ ըլլալու համար պատմուածքը:

Կիւրիւնցիները չնայելով իրենց անցուկ վիճակին, միշտ ալ իրենց ծննդավայրի հայրենակիցներու հանդէպ վառ զգացում մը ունեցած են ու նիւթական եւ բարոյական օժանդակութիւն չեն խնայած: Կազմած են ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՆԵՐ Կիւրիւնցի հայ դպրոցներուն օգնելու նպատակով: Սոյն Միութեան Կեդրոնը եղած է Պոսթլն, իսկ Նիւ Եօրք ունեցած է մասնաճիւղ մը, որուն մասին պիտի անդրադառնանք ուրիշ առթիւ:

1917ին (Ապրիլ 6) երբ Ամերիկա մասնակցած է ընդհանուր պատերազմին, Ամերիկեան բանակին ծառայող Կիւրիւնցիները եղած են Արմենակ Բիրանեան, Միհրան Բիրանեան, Մեսրոպ Պրթիկեան, Յարութիւն Տատուրեան, Յարութիւն Աֆարեան եւ ուրիշներ:

Հայ կամաւորական լէգէոնին մասնակցած են Սարգիս Աֆարեան, Մեսիա Խէնգէտեան, Արմենակ Պէկիրճեան (Պար-

ճեան), Տիգրան Պաղտատրեան, Տիգրան Գայաքեան, Կարապետ Ճամուզեան եւլ.:



ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՅԱՐԵԱՆ

1918 Նոյեմբեր 11ի Զինադադարէն վերջ վերեւ յիշուած անձերն բոլորն ալ ողջ վերադարձած են Ամերիկա, բացի Յարութիւն Աֆարեանէ, որ պատերազմի դաշտին մէջ զարնուած է, իսկ Միհրան Բիրանեան Սուրիա դացած, այժմ կը մընայ Պուէնէս Այրէս, Արժէնթին:

Յետպատերազմեան շրջանին, դաղթականութեան սեւ օրերէն վերապրող Կիւրինցիներէն կին կամ այլ մարդ, մեծ թիւով Ամերիկա եկած են իրենց ազգականներու կամ բարեկամներու օգնութեամբ, երբ Կիլիկիան պարպուեցաւ հայութենէ եւ Հայաստանի Կառավարութիւնն ալ առաջադրով հայութիւնը մնաց յուսաբքուած, անտուն, անտիրական վիճակի մը մէջ, այս կամ այն օտար հողի վրայ, կրկին դաղթական ըլլալու գտնադարձուած:

Որով, 1920-1923 թիւին Ամերիկա հասնող Կիւրինցիներու թիւը եղած է ստուար համեմատութիւն մը անցելոյն

բաղդատմամբ: Հոս զանց կանենք անունները յիշել, տեղ ինչպիսի ճամար:

1924ին Ամերիկայի Կառավարութեան Ներգաղթի նոր օրէնքով, ինչպէս ուրիշ ազգերու նոյնպէս հայերու դաղթը կանցուած է եւ կամ շատ սահմանափակ թիւով գօքա յատկացուած է, ծնողքի կամ զաւկի նախապատուութիւն տալով: Նոր օրէնքի տրամադրութեան համաձայն՝ Ամերիկա հասած են Գալուստ Աէֆիլեանի մայրը եւ Արեւեան, Կրուի նաեւ թէ Բիրանեան անուն Կիւրինցի մը 1929ին Ամերիկա եկած է 12 զաւակներով եւ հաստատուած Ֆիլատելֆիոյ մէջ:

Ուսանելու արտօնութեամբ Ամերիկա այցելողներն եղած են Թադէոս եւ Սեդրակ Սաչխաշեաններ; Յունաստանէն եկած եւ այժմ կ'ուսանին Գլիվլէնի մէջ: Սարգիս Գասարեան՝ Յունաստանէն, կ'ուսանի Պոսթընի մէջ: Օր. Խնկաբեր Սըրըտեան՝ Եգիպտոսէն, կ'ուսանի Նիւ Եօրքի մէջ. Օր. Կատարինէ Զուլճեան՝ Պէյրութէն, կ'ուսանի Պոսթընի մէջ. Օր. Վարդանուշ Զուլճեան՝ Պէյրութէն, կ'ուսանի Նիւ Եօրքի մէջ. Սարգիս Ներսէսեան՝ Պէյրութէն, այժմ վերադարձած Եգիպտոս. Զուարթ Տատուրեան (այժմ Տիկ. Վահուճի)՝ Պէյրութէն, ամուսնացած եւ կը բնակի Նիւ Եօրք:

1930ի սկիզբները Կարապետ Ճամուզեանի զոջանջը՝ Տիկ. Թումաճանեան Պէյրութէն Ամերիկա եկած եւ հաստատուած է Պոսթընի կողմերը:

1930 Յունիսին Յովհաննէս Զէյթունճեանի մօրաքոյրը Մարսէլյէն Պոսթըն ժամանած է:

Ամերիկեան քաղաքացի եղող Կիւրինցիներու հետ ամուսնանալով Ամերիկա մտած են 1924էն վերջ:

Օր. Բեբրուհի Բիրանեան, այժմ Տիկ. Տիգրան Բիրանեան, Տիկին Մարիամ Պողիկեան, այժմ Տիկին Գէորգ Էնթիքէճեան:

Օր. Թադուհի Պուլտուքեան, այժմ Տիկին Սաչխաշեան:

Առեւտրական գործով կամ ամուսնութեան նպատակով արտասահման մեկնած եւ վերադարձած են հետեւեալները. —

1900ի շրջանին խմբովին երկիր մեկնած են Յարութիւն Ալտըրմըշեան, Մատթէոս Մակարեան, Յովհաննէս Թոփալեան, Յարութիւն Սիրանոսեան, որոնցմէ վերջինը վերադարձած է միայն:

1919ի շրջանին Յարութիւն Տատուրեան մեկնած Պօլիս գործով, հոն ամուսնացած, Լեւոն Հէքիմեան մեկնած Պօլիս հոն ամուսնացած, Կարօեան մեկնած Պօլիս հոն ամուսնացած,

1922ի շրջանին Սարգիս Աֆարեան մեկնած Պէյրութ եւ հոն ամուսնացած:

1923ի շրջանին Յովհաննէս Զէյթունճեան մեկնած Ֆրանսա եւ հոն ամուսնացած, Տիգրան Մէնտիլեան մեկնած Յունաստան, հոն ամուսնացած,

1925ի շրջանին Կոստան Տէտէեան մեկնած Բուլպա եւ հոն ամուսնացած, Տիգրան Պէօճիկեան մեկնած Յունաստան, հոն ամուսնացած, Տիգրան Տատուրեան մեկնած Պէյրութ վաճառականական գործով,

1926ի շրջանին Տիգրան Բիրանեան մեկնած Լոնտոն եւ հոն ամուսնացած,

1927ի շրջանին Տիրան Գարայեան մեկնած Ֆրանսա եւ հոն ամուսնացած, Աբրահամ Գրիգորեան մեկնած Յունաստան, հոն ամուսնացած, Յարութիւն Հանապեան մեկնած Ֆրանսա եւ հոն ամուսնացած, Խ. Ժամկոչեան մեկնած Եւրոպա այցելութեան համար,

1928ի շրջանին Արմենակ Կիւրեղեան մեկնած Լոնտոն-Պէյրութ վաճակն գործով,

1929ի շրջանին Սաչխաշեան Սաչխաշեան մեկնած Ֆրանսա եւ հոն ամուսնացած, Վարդան Զէյթունցեան մեկնած Ֆրանսա եւ հոն ամուսնացած, Հրանդ Տէմիրճեան մեկնած Ֆրանսա եւ հոն ամուսնացած, Տատուր Տատուրեան մեկնած Հնդկաստան առեւտ. գործով,

1930ի շրջանին Գէորգ Էնթիքէճեան մեկնած Ֆրանսա եւ հոն ամուսնացած, Համբարձում Թորոսեան մեկնած Ֆրանսա եւ հոն ամուսնացած, Համբարձում Գապագեան մեկնած Ֆրանսա եւ հոն ամուսնացած, Սեդրակ Սարգիսեան մեկ. Յունաստան, ամուսնանալու համար:

Արտասահմանէն առեւտրական գործով Ամերիկա այցելած եւ վերադարձած են. —

1925ի շրջանին Տիգրան Մալխազալեան Պէյրութէն,

1926ի շրջանին Եղիա Սըրըտեան Եգիպտոսէն,

1928ի շրջանին Տիգրան Մալխազալեան Պէյրութէն,

1929ի շրջանին Ալեքսան Գըլպաշեան Պէյրութէն:

Նիւ Եոթի եւ Շրջակայքի Կիրիւնցիներու մէջ տեղի ունեցած ամուսնութիւնը եւ Մնուկը

| | | | | |
|------|---------------------|-------------|--------|---------|
| 1904 | Սուրէն Սուրէնեան | | 2 տղայ | 3 աղջիկ |
| 1917 | Մկրտիչ Բիրանեան | | 1 տղայ | 1 աղջիկ |
| 1926 | Արմենակ Կիւրեղեան | | | |
| 1921 | Արամ Տօնիկեան | | 2 տղայ | 1 աղջիկ |
| | Կարապետ Թորոսեան | | 1 տղայ | |
| | Երուանդ Չախմազեան | Տիթրոյիս, | 3 տղայ | |
| | Եսայի Պահատուրեան | | 1 տղայ | 1 աղջիկ |
| | Ռուբէն Սողոմոնեան | Պալթիմօր, | 1 տղայ | 1 աղջիկ |
| | Աւետիս Տէտէեան | | | |
| 1925 | Մեսրոպ Պըթիկեան | | 1 տղայ | |
| | Յովսէփ Պահատուրեան | Ֆիլատելֆիա | | 1 աղջիկ |
| | Յովհաննէս Ճէմճէմեան | Ս. Լուիզ, | | 3 աղջիկ |
| | Տիգրան Պէօճիկեան | | | |
| 1926 | Կոստան Տէտէեան | | 2 տղայ | |
| 1927 | Յարութիւն Ճրղըլեան | | | 1 աղջիկ |
| | Աբրահամ Գրիգորեան | Բիչմօնտ, | | 1 աղջիկ |
| | Տիրան Գարսեան | | | |
| 1928 | Պաշտուր Մակարեան | | 1 տղայ | |
| | Յովհաննէս Պանտաեան | Ֆիլատելֆիա, | | 1 աղջիկ |
| 1929 | Սարգիս Աֆարեան | | | |
| | Աւետիս Պանդէտեան | Սիրաքիւզ, | 1 տղայ | |
| 1930 | Սարգիս Վահունի | | | |
| | Յարութիւն Թորոսեան | | | |
| | Համբարձում Գապագեան | | | |

Երկիր ամուսնացած եւ Ամերիկայի մէջ գաւակ ունեցած եւ հետեւեալները--

| | |
|---------------------|----------------|
| Տիգրան Տատուրեան | 2 տղայ |
| Թորոս Պանտաեան | 1 տղայ 3 աղջիկ |
| Թադէոս Մարուկեան | 1 տղայ 2 աղջիկ |
| Ենոք Գազանճեան | 1 տղայ 2 աղջիկ |
| Մելքոն Բիրանեան | 1 տղայ 1 աղջիկ |
| Արմենակ Պարճեան | 1 աղջիկ |
| Համբարձում Գապագեան | 1 աղջիկ |
| Պոսթոլ Առաքէլեան | 2 տղայ |

Պոսթոլի եւ շրջակայքի Կիրիւնցիներու ունեցած ամուսնութեան եւ ծնունդի վիճակագրութեան պիտի անդրադառնանք յաջորդիւ:

Ոչ Կիրիւնցիներու հետ ամուսնացող Կիրիւնցի կիւնք--

| | Ամուս. Մականուն | Տեղացի |
|---------------------|-----------------|-----------|
| Ալիս Խէշիւէշեան | | Եօղզատցի |
| Անթառամ Պալիկեան | Քէչէճեան | Սերաստացի |
| Աննա Կիւրեղեան | Պարսամեան | Սարբերդցի |
| Աշխէն Մակարեան | Տէօվէթեան | Ամասիացի |
| Ասողիկ Արօեան | Ժամկոչեան | Ամասիացի |
| Արմենուհի Զըյնոզեան | Թաթարեան | Տէրէնաէցի |
| Ազապի Ճէմճէմեան | Մարգարեան | Սարբերդցի |
| Զուարթ Սիրանոսեան | Շըխեան | Զոմարլցի |
| Զապէլ Ահարոնեան | Աւազանեան | Սերաստացի |
| Զապէլ Թումաճաեան | Տիգրանեան | |
| Թադուհի Զաքըրեան | Դարբինեան | |
| Թուրվանտա Կըպինեան | | Զոմարլցի |
| Ժընէվիէվ Բիրանեան | Միքայէլեան | Սերաստացի |
| Լուսիա Տէվէճեան | Զառացեան | Սերաստացի |
| | Տէվէճեան | Քիւճեան |
| Լուսին Զիմիզարեան | | Սերաստացի |
| Հայկանոյշ Մինասեան | | Սերաստացի |
| Հայկանոյշ Բիրիճեան | | Սարբերդցի |
| Մարիամ Յակոբեան | Պօղոսեան | Ղանդալցի |
| Մարի Խէշիւէշեան | Թէոսեան | Էրզրումցի |
| Ովսաննա Թորոսեան | Աբէլեան | Սերաստացի |
| Սաթենիկ | Տօնիկեան | Սերաստացի |
| Սիրանոյշ Պալիկեան | Քէչէճեան | Սերաստացի |
| Սիրանոյշ Զուլճեան | Պօյաճեան | Բալուցի |
| Սրբուհի Կիւրեղեան | Տիւրէկեան | Սերաստացի |
| Քրիստինէ Թէրճէնեան | Տաղաւարեան | Սերաստացի |

Ամերիկայի կիրքիցիները ունեցած են հետեւեալ մահերը .-

| | Վայր |
|---|------------------------|
| Մահուան բուսական 1901 Յակոբ Թէրճանեան | Մեռած Լօլէլ, Մէսս. |
| 1905 Ղեւոնդ Պայրամ շեան | Մեռած Վօթրթաուն, Մէսս. |
| 1913 Տիկին Ալորմըշեան | Մեռած Նիւ Եորք |
| 1914 Սահակ Շահպաղեան | Մեռած Քալիֆօրնիոյ մէջ |
| 1916 Վահան Քիրքեան, թբէյի արկած | Մեռած Նիւ Եորքի շրջան |
| 1918 Յարութիւն Աֆարեան | Մեռած Պատրղ. Դաշտի մէջ |
| 1919 Սերովբէ Գըլպաշեան, սպանուած | Մեռած Պոսթընի շրջան |
| 1921 Մանասէ Սառահեան, բնական մահ | Մեռած Պոսթընի շրջան |
| 1922 Փոքրիկն Սարգիս Տատուրեան | Մեռած Պոսթընի մէջ |
| 1922 Տիկ. Հոփսիմէ Մախասեան | Մեռած Պոսթընի մէջ |
| 1923 Խաչեր Վարդապետեան բնական մահ | Մեռած Պոսթընի շրջան |
| 1924 Պետրոս Ահարոնեան, օթօյի արկած | Մեռած Նիւ Եորք |
| 1924 Տիկ. Կրէյս Հէքիմեան, վիր. գործը. | Մեռած Պոսթընի մէջ |
| 1924 Մերունի Տիկ. Բիրանեան բն. մահով | Մեռած Պոսթընի մէջ |
| 1925 Յովհաննէս Աէֆիլեան | Մեռած Պոսթընի մէջ |
| 1925 Օր. Հայկանոյշ Տատաղեան, օթօ արկ. | Մեռած Պոսթընի մէջ |
| 1926 Տիկին Տոտաղեան, օթօ արկ. | Մեռած Պոսթընի մէջ |
| 1927 Տիկ. Խէչիւշեան, օթօ արկ. | Մեռած Պոսթընի մէջ |
| 1927 Արմենակ Արեւեան, շրամոյն անձնու. | Մեռած Տիթրոյիտի մէջ |
| 1927 Արշակ Պէշկէօթիւրեան, բնկ. մահ | Մեռած Տիթրոյիտի մէջ |
| 1928 Թորոս Ղէմեան | Մեռած Քալիֆօրնիոյ մէջ |
| 1930 Տիկ. Սրբուհի Գապաղեան, վիր. գործողութենէ մեռած Փէթըրսիտի մէջ | Մեռած Փէթըրսիտի մէջ |
| 1930 Փոքրիկն Արա Տատուրեան, ճամսու, կապոյտ Հաղէ մեռած Չըլսիի մէջ: | Մեռած Չըլսիի մէջ: |



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Ա Ր Կ Ա Ծ

Ամերիկայի կիրքիցիները ունեցած են հետեւեալ մահերը .-

Մահուան բուսական
1901 Յակոբ Թէրճանեան

1905 Ղեւոնդ Պայրամ շեան

1913 Տիկին Ալորմըշեան

1914 Սահակ Շահպաղեան

1916 Վահան Քիրքեան, թբէյի արկած

1918 Յարութիւն Աֆարեան

1919 Սերովբէ Գըլպաշեան, սպանուած

1921 Մանասէ Սառահեան, բնական մահ

1922 Փոքրիկն Սարգիս Տատուրեան

1922 Տիկ. Հոփսիմէ Մախասեան

1923 Խաչեր Վարդապետեան բնական մահ

1924 Պետրոս Ահարոնեան, օթօյի արկած

1924 Տիկ. Կրէյս Հէքիմեան, վիր. գործը.

1924 Մերունի Տիկ. Բիրանեան բն. մահով

1925 Յովհաննէս Աէֆիլեան

1925 Օր. Հայկանոյշ Տատաղեան, օթօ արկ.

1926 Տիկին Տոտաղեան, օթօ արկ.

1927 Տիկ. Խէչիւշեան, օթօ արկ.

1927 Արմենակ Արեւեան, շրամոյն անձնու.

1927 Արշակ Պէշկէօթիւրեան, բնկ. մահ

1928 Թորոս Ղէմեան

1930 Տիկ. Սրբուհի Գապաղեան, վիր. գործողութենէ մեռած Փէթըրսիտի մէջ

1930 Փոքրիկն Արա Տատուրեան, ճամսու, կապոյտ Հաղէ մեռած Չըլսիի մէջ:

նայելու համար, անակնկալօրէն չենք վերելակ բեռնատարը կէնայ վար, կը դաշի Յարութիւնի կոնակին եւ մէջքին ոսկորը վնասուած՝ շարժելու անկարող վիճակի մը մէջ կը փոխադրուի Չըլսիի մօտիկ Մէթօրիլը հիւանդանոցը:

Բժիշկները յոյս չեն տար որ կապրի: Շարաթներ կանցնին միշտ մասնագէտներու խնամքին տակ. բժշկական փորձերն ու արգիւնքը լաւանալու որեւէ մէկ յոյս չեն ներշնչեր: Սակայն հիւանդը ինքն իր մէջ ապրելու ուժգին կամքն ունենալով կը մնայ անտարբեր իր վիճակին հանդէպ միշտ զուարթ ու անհոգ արամադրութիւն մը ունենալը զինքը կը մղէ դէպի լաւագոյն յոյսերու եւ ստողութեան...:

Ժամանակ մը վերջ կը փոխադրուի Չըլսիի Զինուորական հիւանդանոցը, ուր իբր Ամերիկեան քաղաքացի եւ պատերազմի մասնակցող զինուոր, կը խնամուի մասնագէտներու միջոցաւ ճիշօրէն: Նախկին հիւանդանոցի հիւանդապահին մէկ անդուշտութեամբ, երկար ատեն Քէսքի մէջ պահած ըլլալուն արգիւնք, սղնահարին վրայ խոշոր վէրք մը կը բացուի, փտած մսերը մաքրելէ վերջ: Ողնոսկրերը իրենց բնական տեղը եւ ձեւը կը դրոնեն, բայց վէրքը հաղիւ երկու տարիէն կը չորնայ: Այդ վէրքին պատճառով ծունկերը կը մնան անդալ, նիհար ու անզօր շարժելու, բայց հետզհետէ արեան շրջանը կը կանոնաւորուի ելեքտրական այլ՝ և այլ դործողութիւններով ու կրկնակի զգալ, շարժել ու ուժեղնալ, այնպէս որ ժամանակի ընթացքին կարող կը ըլլայ ոտքի կենալու ու քայլելու երկու գաւազաններու նեցուկով:

Վերջերս հիւանդանոցը թողնելով իր տան մէջ կը խնամուի... բնական ստողութիւնը գտած է գրեթէ ախորժակի, մարսողութեան տեսակէտով եւ նոյնիսկ, ինչ որ ուրախալի պարագայ մ'էր, տղայ գաւազի մ'ալ հայր եղաւ, երջանկութիւն մը բերելով տան ընտանիքի այդ ցաւոտ օրերուն: Սակայն, փոքրիկն Արա, նորածինը՝ գեղեցկութեան ու ստողութեան տիպար մանուկ մը, գժբաղդաբար երկար

Հ'ապրեցաւ, կապոյտ հագի անդգոյշ վա-
րակումին պատճառով: Այս կորուստը իր
և իր ընտանիքին մեծ ցաւ ազդեց, բայց
պէտք էր համակերպիլ կեանքի և բնու-
թեան պայմաններուն...

Ու այսօր, Պրն. Յարութիւն Տատուր-
եան նիւթական ինքնաբաւ դերքով, կէս
հաշմանդամ վիճակի մէջ իր ընտանիքին
ու երեք զաւակներու հայր ըլլալու դո-
հունակ սրտով կ'ապրի իր համեստ տան
յարկին տակ, առանց դժգոհելու իր օր-
ւայ ձանձրոյթին ու բաղդին դէմ:

ՊԵՅՐՈՒԹ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆ ՍՊԱՆՈՒԱԾ



Հայ թերթերը գուժեցին հեռագրական
սեւ լուրը ժամանակին, երբ Վահան Վար-
դապետեան սպանուեցաւ Պէյրութի Հայ
Ազգային Գաւառական Ժողովի գիշերուայ
նիստին մէջ, հակառակորդ կուսակցու-
թեան մը կողմէ ծրագրուած դաւադրու-
թեամբ:

—Վահան Վարդապետեան ճանչցայ
այն ատեն, երբ կեանքի ասպարէզ նոր
էի թեւակոխել և տակաւին օրրութեան

ՀՐԴԷՂ

Պրն. Սահակ Խէչիսէեան հրդէհի ար-
կած մ'ունեցած էր իր անձնական տան
մէջ (Յիլատեղի) երկու տարի առաջ:
Իր մէկ սուրբ կաղութեան պատճառով
չէր կրցած անմիջապէս փախչիլ, որով
իր մարմնոյն վրայ այրուածքներ ունե-
ցած էր: Կ'իմանանք թէ այժմ լաւացած
է և կը գործէ:

Ապահովագրական Ընկերութիւնը հը-
դէհուած տան յարկաբաժինը նորոգել
մերժած է, հրդէհի պատճառը օրինական
չըլլալուն համար:

բերուն, որոնց վրայ իր թաւ յոնքերը
տառածի ամպերու կուտակումը երբէք
չի տեսած:

Չնայելով իր լուրջ բնաւորութեան,
այս միշտ ալ զուարճախօս էր և խօսակ-
ցութեան նիւթի անսպառ աղբիւր ունէր:
Պիտէր փոքրին ու մեծին հետ յարմարիլ
և ընկերանալ:

Վահան Վարդապետեան դաղափարա-
կանով, ազգային վաւ զգացումներով տո-
րոքուած, ազատատենջ սիրտ մ'ունէր:
Պէյրութի Ազգ. Միութեան, Թաղակա-
նութեան և Քաղաքական Ժողովներու
անդամակցած և իրեն վստահուած պաշ-
տօնները անձուիրաբար և ձեռնհասօրէն
վարելով ընդհանուր հայ հասարակու-
թեան կողմէ պատույ արժանի, ծանօթ
ու սիրուած դէմք մ'եղած է: Նաեւ հը-
րապարակի վրայ ծանօթ վաճառական
ըլլալու հանդամանքով իրեն գիժող շատ
մը Կիւրինցի կամ այլ տեղացի հայերու
օգտակար եղած է, գործի տեսակէտով:

Վարդապետեան Կիւրին չէ մնացած,
մէկ-երկու անգամ հաղիւ այցելած է,
սակայն Կիւրին ապրողէ մը աւելի Կիւրի-
նի աշխարհագրական գիրքին, օլին, ջու-
րին ու գիւղերուն ծանօթ էր: Գէթ այդ-
էս կը ձեւացնէր:

—Տղա, Պալլը Գոյն գացի՞ր...

—Ա՛հ, մէկ մը սա Ելքէնին ծովուն
ջուրը ըլլար լողայինք... Ճախճորին ա-
կին ջուրը ըլլար խմէինք...

Եւ շատ մը ուրիշ հայրենի կարօտը
եղող յիշատակութիւններ կրնէր կենսու-
նակ ժախտը պահ մը ԱՍԻ մը մէջ թոշ-
նեցնելով...

Վահան Վարդապետեան իր ետին թո-
ղուցած է այրին, երկու աղջիկ և մէկ
միայն զաւակներով:

Կիւրինցիները կը սգան իր դառնաղէտ
մահը, որ անդարձանելի կորուստ մըն է:
Միթիթարութիւն այրի Տիկին Վարդա-
պետեանի և պարագաներուն:

ՏԻԿԻՆ ՆՈՒԱՐԴ ԴԱԻԹԵԱՆ

Մեռած Դամասկոսի մէջ, 21 Հոկտ. 1928:

Տիկին Նուարդ աղջիկն էր Տիար Անա-
նիա Մավրապետեանի, ներկայիս հաս-
տատուած Պէյրութի մէջ, և քոյրը Տի-
արք Տիգրան և Ռուբէն Մավրապետեան-
ներու: Իր ետեւ թողուցած է ամուսինը՝
Պրն. Յակոբ Դաւիթեան և երեք զաւակ-
ներ:

Խորին ցաւակցութեան իր բոլոր
պարագաներուն:

ԿԻՐԱԿՈՍ ԱՖԱՐԵԱՆԻ ՄԱՀԸ

Հայ թերթերէ և անձնական նամակ-
ներէ իմացանք որ վերջերս տեղի ունե-
ցած Պէյրութի առևտրական սուր տաղ-
նապին հետեւանօք տեղացի արար և հայ
վաճառականներ՝ թիւով 158, սնանկա-
ցած են:

Ասոնց մէջ է եղած նաեւ Կիւրինցի Պ.
Կիրակոս Աֆարեան, տեղւոյն վրայ յայտ-
նի և սիրուած վաճառական, որ չկրնալով
տոկալ տիրող կացութեան, անձնատպան
կըլլայ չորրորդ յարկի մը պատուհանէն
ինքզինք վար նետելով:

Կիրակոս Աֆարեան տնօրէն եղած էր
Պէյրութի մէջ Իբլիքեան մալուֆաթու-
րայի վաճառատան: Հրապարակի վրայ
ծանօթ և սիրուած անձնաւորութիւն մ'էր
Պրն. Աֆարեան թէ հայ և թէ տեղացի
առևտրականներէ և հայրենակիցներէ:
Գործի բերումով սոյն վաճառատունը իր
անուն և անձնական հաշտոյն դարձնե-
լով կը շարունակէր վերջին քանի մը տա-
րիները յաջող կերպով:

Այդ վերջին տարուայ հրապարակի ա-
ռևտուրի կայունութեան և գիներու ան-
կումին պատճառով ստիպողականութեան
տակ դառնուած է մօտաւորապէս հաշուը-
ւած հինգ հազար հնչոյն ոսկիի դումա-
րով բաց ելնել:

Իր նկարագրի խառնուածքը ըլլալով ազնիւ, պատուաւոր եւ վեհանձն, շատ գէշ ազդուած է այս հրապարակաւ եղած պատուարկութենէն եւ շրջանու վիճակի մը մէջ խելակորոյս եղած է քանի մը օր:

Կիրակի օր մը, իր տան մէջ, բարեկամներու ներկայութեան, հակառակ անոնց հսկողութեան, անակնկալօրէն ինքզինք դուրս կը նետէ պատուհանէն փողոցի սալախատակին վրայ, ուր անմիջական կը լայ մահը:

Կիրակու Աֆարեան իր ետին կը թողու կինը, երեք զաւակներով:

ՕՐ. ՍԻՐԱՆՈՅՇ ԳՈՋՈՒՆԵԱՆԻ ՄԷԿ ՅԱՆԴՈՒԳՆ ՔԱՅԼԸ

Օր. Սիրանոյշ զաւակն է Տէր եւ Տիկ. Միհրան Գոջունեանի (հաստատուած Միտրլորո, Մէսս.): Ծնած է Ամերիկա եւ հետեւաբար ամերիկեան նոր սերունդի զգացումներով ու ոգիով օժտուած է: Տակաւին մանուկ հասակին, իր դպրոցական պարագմունքներէն դուրս, անյազ ընթերցող մ'եղած է ամերիկեան այլեւայլ ամսաթերթերու, սերային վէպերու եւ մանաւանդ շարժապատկերի պատմութիւններու եւ նկարներու սիրահար մը:

Այսպիսի ընթերցումի եւ նկարներու յափշտակութիւնն ու երեւակայութիւնը այն աստիճան ուժեղ տպւորութիւն մը թողուցած են Սիրանոյշի մտքին վրայ, որ որչեր է ամէն դնով երթալ հասնել Հաւի Վուա ամերիկեան շարժապատկերի արտադրութեան կեդրոնը եւ հոն որեւէ ընկերութեան դիմելով դերակատարի պաշտօն մը ձեռք բերել, ասոյն ըլլալու այս կամ այն խաղին, եւ միջոցապէս համբաւ ունենալու, իրականացնելու իր ամբողջ երազը:

Սոյն ծրագիրը գործադրելու համար նա կ'սկի իր աւօրեայ ծախքերէն մաս մը պահեստի դնել ճամբու ծախքի մը բաւարար դուժար մը ապահովելու համար:

Սրտի խոր կսկիծով կը սգանք դառնալէս մահը: Միտրաբարքիւն Այրի Տիկին Աֆարեանի եւ պարագաներուն:

ՊէՅՐՈՒԹ. — Տիար Տիգրան Մալիսաբալեանի կինը՝ Տիկին Նարդուհի ծանր հիւանդութիւն մը անցուցած է:

Օգոստոս 15 թիւ հեռագրով կիմանաք անկողնի մէջ բաւական կազդուութեամբ ըլլալու եւ վտանգը անցուցած:

Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք:

Եւ օր մը Սիրանոյշ երկտող մը կը գրէ իր մօր, թէ՛ «ես կը մեկնիմ, մայրիկ, յետ այսու կրնաս իմ թերթերը պատուել», եւ անմիջապէս կը մեկնի Պոսթըն, անկէ ալ Արեւմուտք մեկնող երկաթուղին աննելով ճամբայ կենէ դէպի Հալի Վուա հասնելու համար:

Կը հասնի իր երազած քաղաքը, կը դիմէ շարժապատկերի ընկերութեան մը, կընդունուի եւ կը ժամադրուի երկու օր վերջ գործի սկսելու պայմանով: Սակայն մինչ այդ, Սիրանոյշի ծնողքը կը զանն թողուած թուղթի կտորը, գրութեան պարունակութիւնը զերենք ահուզողի կը մատնէ, այս ու այն կողմ կը վազեն, օտարկանութիւնը կ'ստուգէ կայարաններէն որ Քալիֆորնիա Հալիվուտի համար թիքէթ առած եւ մեկնած է: Լուր կուտան Հալիվուտի գաղտնի ոստիկանութեան, որ հետապնդեն ազլիկը եւ գտնելուն պէս վերադարձնեն:


Երկու օր վերջ երբ Սիրանոյշ ժամադրուած գործատեղին կերթայ, լաւ հագած եւ պատկառելի դէմքով մարդ մը ժպտուն կը բարեւէ Օրիորդը, անուն, մակնունն եւ ինքնութեան ճշդում մը ընելէն վերջ, կը յայտնէ թէ միասնաբար պիտի երթան այսինչ տեղ գործի սկսելու համար, ու կը մեկնին:

Օրիորդը գոհ կը լայ այսպիսի շուտա-

փոյթ յաջողութիւն մը ձեռք բերած ըլլալուն համար, եւ ճամբու ընթացքին իր հետ քաղաք մարդուն նկատմամբ գործատէրն ըլլալ կը կարծէ, բայց երբ կայարան կը հասնին, կը հակնայ որ ձերբակալուած է, եւ հսկողութեան տակ կը վերադառնայ իր հին քաղաքը, ուրկէ խոյս տուած էր:

Սիրանոյշ այժմ կը մնայ իր ծնողայ հետ եւ կը շարունակէ իր ուսումը:

Գ Տ Ն Ո Ւ Ա Ծ Ն Ե Ր



ՀԱՅԿ ԶՐԻՆԿԻՐԵԱՆ

Հայկ Զրինկիրեան մօտաւորապէս 16 տարիներէ ՚ի վեր կորսուած կը կարծուէր: Իր ազգականներն յոյսի նշոյն անգամ չունէին թէ նա կ'ապրի, բայց ուրախ ենք յայտնելու որ Տիկին Կատարինէ Տատուրեան, մեծ քրոջ մը՝ եւ աւելի՛ մօր մը գուրգուրանքովն ու խանդաղատանքովն կ'աւետէ իր եղբոր Հայիկի ողջ աւույլ ըլլալու եւ գտնուելու: Այժմ հաստատուած է Գահիրէ, Եգիպտոս, եւ իր անձնական գործով կ'զբաղի:

Տիկին Տատուրեան իր եղբոր կարօտը սրտին եւ յուզումը արցունքոտ աչքերուն՝ կը պատմէ:—

1909 թուականին Հայկ իր 14 տարեկան հասակին մէջ Կիւրինէն մեկնած էր Ատանա, Երկրաչափական դպրոցը ուսանելու համար: 913-1914ի շրջանին քաղաքական խառնակութեանց հետեւանօք սոյն դպրոցին քայքայման պատճառով իր Արաք ուսուցչին հետ մեկնած էր Եգիպտոս, ուրկէ, Կիւրինէն տեղահան ըլլալէ առաջ, իրմէ տաճկերէն գրուած քարթ մը ստացած էի միայն, որ կ'իմացնէր լաւ հանգիստ ըլլալը:

Գաղթականութեան շրջանի այդ կենաց եւ մահու օրերէն երբ ազատուցայ ու Տէրգորէն ինքզինքս Պոլիս ձգեցի, Զինադադարէն անմիջապէս վերջ, ծանօթներու, բարեկամներու միջոցով շատ փնտնեցի, բայց ոեւէ լուր մը չկրցայ առնել Հայիկի մասին: Զարահատ սրտհաստորներուս պէս զինքն ալ կորսուած եւ նոյնիսկ մեռած կը կարծէի: Փառք Տիրոջ, ուրախութիւնս մեծ եղաւ, երբ իր ողջ ըլլալը իմացայ Պրն. Սարգիս Ներսէսեանէ, որ 1929ին Ամերիկայէն Եգիպտոս մեկնելու ժամանակ մասնաւորապէս յանձն առաւ Հայ թերթերու միջոցաւ փնտնուք մը ընելու խնդրանքս:»

Տիկին Տատուրեան կ'աւելցնէ «Կը թելադրեմ բոլոր ծնողաց, որ չլուսահատին, փնտնեն իրենց սրտհաստոր կորուստները թերթերու միջոցաւ եւ կը մաղթեմ որ իրենց փափաքին հասնին»:

Խմբագրութիւնս կը յայտնէ իր խնդակցութիւնը Տէր եւ Տիկին Տ. Տատուրեանի:

Մարտէյլ, Ֆրանսա

ՕՐ. ԵՍԹԵՐ ՇԱՀՊԱՉԵԱՆ

Գաղթականութեան շրջանին կորսուած կը կարծուէր Օր. Եսթեր Շահպաղեան, Տիկին Արուսեակ Շահպաղեանի դուստրը: Վերջինը Պէյրուսէն Մարտէյլ փոխադրուած էր խումբ մը Կիւրինցիներու հետ Պոզիկեան անուն երիտասարդի մը կողմէ շահանդորէն պատրաստուած Ամերիկա անցնելու ծրագրով:

Սոյն ծրագրի կեղծ ու անյաջող ըլլալը նիւթական կորուստներու ենթադրելէ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

ԿԻԻՐԻՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՆ ՏԻԿՆԱՑ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ նախաձեռնութեամբ այս տարուայ շրջանին սարքուած են՝ մէկ դաշտահանգէս, Յուլիս 4, 930, ուրիկէ գոյացուած է զուտ շահ \$98.38: Եւ մէկ հանգէս-խնճոյք, Հոկտ. 26, 1930, որը թողուցած է մօտաւորապէս \$200.00 զուտ շահ:

Այս առթիւ քաջալերելի է Կարգադիր Յանձնախումբերու աշխատանքը:

Պօսթըն եւ իր շրջակայքը Կիւրինցիներու մեծամասնութիւնը ներկայացնող գաղութ մ'եղած են հինէն ի վեր: Կալընկալուելի որ Հայրենակցական որեւէ հասոյթաբեր ձեռնարկ ի նպաստ Միութեան, ըլլայ աւելի արգիւնաւոր, քաջալերող եւ գոհացուցիչ:

Այս պարագան որքան որ կախում ունի Հայրենակիցներու, անդամներու վերաբերումէն, նոյնքան եւ աւելի կախում ունի նման ձեռնարկներ վարող մարմիններու գործունէութեան չափանիշէն:

Կիւրինցին, Հայրենակցական գործի ի նպաստ միշտ առատաձեռնօրէն գոհող է: Ուրեմն պէտք է պահանջել եւ գոհողութեան այդ ոգին գործնականապէս ի յայտ բերելուն մղում տալ:

Մեր մէջ կը պակսի մղիչ ոյժը:

Կ. Հ. ՄԻՈՒԹԵԱՆ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

Ինչպէս Կեդր. Վարչութեան տեղեկագիրը կը յիշէ, Կ. Հ. Միութեան Նիւ Եորքի Մասնաճիւղը այլեւայլ պատճառներով գործունէութենէ դադրած վիճակ մը կը ներկայացնէր մօտ երկու տարի: Սակայն, ուրախ ենք ըսելու որ, ինչպէս կ'իմանանք, մօտ օրէն Մասնաճիւղը վերակազմուելով գործունէութեան պիտի սկսուի առաջուան եռանդով ու թափով:

Այս առթիւ պիտի սարքուի երեկոյց մը, Հայրենակցական խնդրով դրադելու եւ թէ Կիւրինցիական հաւաքոյթ-ժամանց մը ունենալու համար, ուր եւ հոնոյքը պիտի ունենանք լսելու Տիար Սուրէն Սուրէնեան:

Կարգադիր Յանձնախումբը աշխատանքի մէջ է եւ պիտի տեղեկացնէ երեկոյցի օրն ու վայրը:

Նիւ Եորքի Մասնաճիւղի անցեալ գործունէութեան տեղեկագրի եւ վերջնականագործերու շուրջ պիտի յուշագրեն յաջորդ թիւերով:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒՐԻՆՑԻՆԵՐՈՒ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կաղթականութեան շրջանէն վերջ վերադրուելու Հայ Կիւրինցիներու վիճակագրութիւնը պատրաստուելու համար կը խնդրուի բոլոր Կիւրինցիներէն, որ ստորեւ նշանակուած ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԸՏՐՕՆը լեցնեն մեղմով, կարգացուելի ձեւագրով եւ ճամբին Խմբագրութեանս:

Սոյն ձեռնարկը անհրաժեշտ է եւ շատ կարեւոր Կիւրինցի Հայրենակցական Միութեան ունենալիք գործունէութեան համար, միեւնոյն ստեղծ ամէն Հայրենակցի պիտի օգտուի ընդհանուր Կիւրինցիներու անուանացանկի հրատարակութենէն:

Մասնաւորաբար կուզենք մասնաճիւղերու ուշադրութեան յանձնել սոյն պարագան, որ իրենց ձեռքի տակ ունեցած անուանացանկերէն մէյմէկ օրինակ ուղարկեն մեզի:

Շուտափոյթ նկատառութիւնը մեծապէս պիտի օգնէ ձեռնարկի յաջողութեան, որուն համար կանխապայտ շնորհակալութիւններ:

ՄԱՆՕԹ. -Տես Վիճակագրութեան կրթութիւնը կողքի էջին վրայ:

ԿՈՉ-ԳՐԱԻՒՄ

Յարգելի Հայրենակիցներ, ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇԻ Ա. Տարի, Թիւ 1 անդրանիկ հրատարակութիւնը ահաւասիկ ձեր արամադրութեան տակ կը գլուխէք:

ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇ կազմով մանուկ, գլուխով թոթով, իր առաջին քայլափոխին վրայ է ու կուզէ իր ամբողջ ճիգն ու ուժը ի գործ դնել քաջալու համար: Ձեր բարոյական եւ նիւթական քաջալերանքը պիտի ըլլայ օղնական ձեռքերը՝ զայն մեծնելու, քաղցնելու, աւելի փայլուն, ճոխ եւ ներկայանալի ընելու եւ հասցնելու համար զայն իր լաւագոյն նպատակին:

Թերթիս բովանդակութիւնը կազմող նիւթերը կարելի է մէյ մէկ նմոշներ նրկատել անցեալի եւ ներկայի ապրումներու յուշագրութեան համար, որով կը փափաքինք, որ Կիւրինցի պատմական, հանրային, կրթական, կրօնական, քաղաքական եւ առեւտրական եւ այլ նիւթերը շօշափող ձեր յուշերն ու ապրումները գրէք կամ գրել տաք ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇԻ համար, ինչպէս նաեւ բաժին հանէք ԿԻՆ-Օ-ԿՕին:

Հարկ կը տեսնենք յիշեցնելու ձեզ, որ «գրական կարողութիւն կամ գրելու ձիրք չունիմ» չըսէք, այլ պարզ թղթակցութեամբ ձեր ուրոյն ոճով ու գրութեամբ մասնակցութիւննիդ բերէք թերթիս զարգացման համար:

Մեր այս հրատարակութենէն (ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇ ԵՒ ԿԻՆ-Օ-ԿՕ) գոյացած զուտ շահը, ինչպէս նաեւ նուէրներէ եւ հասոյթաբեր ձեռնարկներէ գոյացած գումարները Հոգատար Մարմնոյ մը՝ հովանաւորութեան տակ պիտի յատկացուին:

*Հոգատար Մարմնոյ դիւանի ընտրութեան արդիւնքը պիտի տեղեկագրուի յաջորդիւ:

Եւն կրթական գործի, յարկապէս ընդունակ եւ կարօտ ուսանողներու գործնական մասնագիտական ճիւղերու մէջ մարդելու համար:

Ուրեմն, ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇը քաջալերելով, նպաստած պիտի ըլլաք նոր սերունդի դաստիարակութեան գործին, որը միակ միջոցը պիտի ըլլայ վաղուայ գործնական կեանքի ստպարէզին մէջ, Հայրենասիրական ազնիւ զգացումներով սուգուած Կիւրինցիներ պատրաստելու համար:

Կ. Յ. Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յ. Գ. - Ստորեւ նշանակուած բաժանորդագրութեան կտրօնը լեցնելով ձեր նուէրին հետ միասին բարեհաճեցէք զրկել թերթիս Հոգատար Մարմնոյն Գանձապահին: -

MR. TATEOS ZAROUKIAN
308 Columbus Avenue
New York City, N. Y.

ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇԻ Հոգատար Մարմնոյ Յարգելի Դիւանին,
Նիւ Եորք, Ն. Ե.

Ստացած եմ ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇԻ Ա. Թիւր. ի քաջալերութիւն ձեր աշխատանքին եւ իբրեւ նախաձեռնողի Հայրենակից իմ մասնակցութիւնը բերելու թերթիս զարգացման եւ աւելի ճոխ բովանդակութեամբ հետզհետէ հրատարակելու համար յաջողական թիւերը, միեւնոյն ստեղծ նոր սերունդի դաստիարակութեան գործին նպաստած ըլլալու համար, ներփակ կը գտնէք առ ի գին՝ բաժանորդագրութեան, \$..... (.....):

Յարգանք
Անուն
Հասցէ

ՈՒՇՆԵՐՈՒԹԻՒՆ

ԿԻԻԲԻՆԻ ՅՈՒՇԻ որպէս բաժանորդա-
գին եւ նուէր գրկուելիք գումարները գր-
կել Ձե՛քով կամ ՄԸՆԻ ՕՐՏԸՐով: Ստաց-
ւած գումարները, փոխան ստացակամի,
պիտի ծանուցուի թերթիս ՆԱՄԱԿԱՏՈՒ-
ՓԻՎ մէջ, նուիրատուներու անուններով:

ԿԻԻԲԻՆԻ ՅՈՒՇԻ
ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Ե. Չ. Գ

Ամերիկայի եւ արտասահմանի բոլոր
Կիւրիցիներէն կը խնդրուի, որ իրենց
հասցէներու փոփոխութեան, նշանու-
քի, Ամուսնութեան, Մեկնումի, Ժամա-
նումի, Փնտտուքի, Արկածի, Մահուան,
եւ այլ լուրերու եւ ծանուցումներու հա-
մար գրեն ուղղակի Խմբագրութեանս:

ԿԻՆ-Օ-ԿՕ

ԳՐԱԿԱՆ - ՉԱԻԵՇՏԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 1

30 ՆՈՅ. 1930

Vol. I, No. I, November 30, 1930

Կ Ի Ն - Օ - Կ Օ

ԿԻԻԲԻՆԻ ՅՈՒՇԻ պզտիկ աղբէ-
րըն է ԿԻՆ-Օ-ԿՕ:

Նա պիտի հսկէ ծիծաղի, ահա-
հա իհիհիի, հեզնանքի ու զը-
ւարթ ժամերու միակ ժամադրա-
վայրը եզոզ քլիւպին, որուն բա-
ցումը կատարուած է Կոտանենց
Կարապետին կնքահայրութեամբ:

Ամէն Կիւրիցի կը հրաւիրուի
հոն, սուրճ մը խմելու եւ ծանօթա-
նալու ԿԻՆ-Օ-ԿՕի հետ:

ԿԻՆ-Օ-ԿՕ կը փափաքի ունենալ
չառ մը աշխատակից անդամներ:
Անոնք, որոնք ունին նիւթեր Կիւ-
րիցի հին էձէներէն, տէպէներէն
մնացած: Օրինակի համար. սասց-
ւածքներ, իմաստալից մեկնութիւն-
ներ, սրամիտ խօսքեր, հարսի-փե-
սի, նշանածի երգեր, սիրային
պատմուածքներ, Խէնթ Տիգրանի
խաղերէն, եւ հանրածանօթ կատա-
կարաններու ըսածներէն ու լսած-
ներէն, եւայն, եւայն...: Այս
բոլորը թանկարժէք են ու անհրա-
ժեշտ պէտք, գաւառական հնու-
թիւններու, բնութիւններու հաւա-
քածոն կազմելու համար:

Ուրեմն, շտապեցէք, հաճիք, օր
պուզ մէկ մէկ ծրար:

ԿԻՆ-Օ-ԿՕ այսու կը յայտարարէ,
որ իրաւասութիւնը ունի Կիւրիցի-
ներու մէջ ժողովրդականօրէն խօս-
ւած, խէնթտեղարուած եւ առածի
կարգ անցած նիւթեր, փոխաբերա-
բար գործածուած ասութիւններ եւ
այս կամ այն անունին, ընտանի-
քին, անձին վրայ հանուած ու եր-
գուած խաղերն հաւաքելու ու հա-
սարակութեան տալու, նկատելով
զանոնք զուտ Կիւրիցիներու ապ-
րումներն ու յուշերը:

Հետեւաբար, ԿԻՆ-Օ-ԿՕ պատաս-
խանատու չէ իր էջերուն մէջ երե-
ցած որեւէ նիւթի, յօդուածի, այս
կամ այն անձի, իմաստի կամ ա-
նունի անձնականութեանց:

Գրութիւնները պէտք է ըլլան
Կիւրիցի գաւառաբարբառով եւ
նիւթերն ինքնատիպ ու պարկեշ-
տութեան սահմանին մէջ:

ԿԻՆ-Օ-ԿՕի էջերը փայլուն, ա-
ւելի ճոխ եւ ընթերցողին համակ-
րելի ընելու համար գործնական ա-
ջակցութեանց հետ կը սիրենք լսել
թելադրանքներ: Եթէ մեր մէջ ու-
նինք ծաղրանկարիչներ, Սէթուկին
Թուռումպան գծելու չափ կարող,
կը յուսանք օգտուիլ իրենց մասնա-
գիտութեանէն:

ԿԻԻԲԻՆԻ ՅՈՒՇԻ կնտուլիկ ԿԻՆ-
Օ-ԿՕն կը կարօտի կանաչ կուտի...

Կտտանենց Կարապետին Կնքաճօր Կնկան Կեսուրին Կարկտանոտ Կրծանոցին Կտպը Կտրեցաւ. Կարծիր Կանաչ Կայով Կրտսեցին...

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԽԱՂ - ԱՍՈՒԹԻՒՆ

Ատին մատին ջրատին -Բէթ խնձորին փուշտին

Ալճին-Կոլճին Լապտակին թռչիկին:

Իհամ կաւառ դամ կաւառ Խաչիկ քեզի օգնակամ, Կուտ ուտէ կանկառ խմէ Հայեւորդոյն թափեցնէ Ասի ուտէ ասի էլլէ...

ՀԱՆՆԼՈՒԿՆԵՐ

- 1.- Էլա ի լեռը, թափեցաւ կոզիս սիս-էտը:
2.- Լեռուն ետեւ թոփ մը կտաւ:
3.- Գետնէն կելլէ քերքով տէտէ:

ՀԱՆՆԼՈՒԿՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

- Թիւ 1.- Կարկաւա:
Թիւ 2.- Մայրամուտ:
Թիւ 3.- Կաղամբ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍՍՅՈՒԱԾՔ

Մըմեր ապուր թուրտան, Հարս ու կեսուր կուրտան:

Կափուն մը կտաւ, Արեւը մարը մտաւ: Կէ՛նՕ40 3

ԹԵԼԱԴԻՐԱՆՔ ՄԸ

ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇԻ ձեռնարկած Վիճակագրութեան կարօնը լեցնելու ատեն, անոնք, որոնք իրենց տարիքին նկատմամբ խնայող կուզեն ըլլալ, կրնան բորբոքվին զանց առնել եւ կամ կէսը գրելով՝ երկտասարդանալ: Օրինակի համար.- Պ. Կ. Թորոսեան (ՊՕՁՕ) քսանեւեքեքնկէս տարեկան եմ, կրսէ...

ԲԱՐԷ ՄԱՆՈՒԿ

.-Քարէ մանուկ քար կըլիմ:

.-Մեղքը շէլիս:

.-Սըկից տէտէ չերթամ...

Այս էր երգում ընելու բառերն ու ձեւը մանուկ հասակի սղայոց եւ շատ անգամ կին մարդոց խօսակցութիւններու մէջ:

Դպրոցին մէջ յաճախ կը գործածուէր երբ գերք մը կամ մատիտ մը առնել վերադարձնելու խոստում մը պիտի ըլլար երկուքի միջեւ:

.-Ի՞նչ կայ, քիչ մը գերքդ տուր բան մը նայիմ տամ:

.-Չես տար:

.-Կու տամ. մեղքը շէլիս, կուտամ, քարէ մանուկ քար կըլիմ, կուտամ, սըկից տէտէ չերթամ, կուտամ:

.-Քա տղայ, հացին փշուրը մի վաթիր կոխիրտիր, քարէ մանուկ քար կը կըլիս, կըսէին նաեւ մայրեր, երբ անըզ-գուշութեամբ հացի փշրանքներ թափէին գետին: Հաւերը արգէն չէին թողուր որ ոտքի կոխան ըլլան, բայց սովորութիւն եղած էր --«քար կը կըլիս մի վաթիր» ըսելը:

Կը յիշեմ, էձէս քանկցս իր հեքիաթներու շարքին պատմած էր Քարէմանուկի աւանդական առասպելը, ինչ որ երեւակայութեանս ու մտքիս մէջ տեղ գրաւած էր:

.-Է՛վէլլ ժամանակը --կը պատմէ Էձէս. --Էրեկ մը կնիկ մը կան եղեր, ջաղայ մը կուռնան: Էս էրեկն ու կնիկը քնդտար աղքատ ին եղեր որ տուններին շորի կտոր մը պիլէ չկայ եղեր: Օր մը կնիկը լէ՛վէ՛ էփած ատեն ջաղան վրան կաղտոտէ, էրեկն ալ տուն կուգայ: Կնիկը ասդին կը հայի, էնքին կը հայի ջափութի կտոր մը չկայ, համան լէ՛վէ՛ մը կառնէ ու ջաղային վրան կը սքփէ: Աստուած Տէտէն կը տեսնէ Էս շար կնկան ըրածը. կը բարկանայ, կը պոռայ ու կըսէ որ լեռան վրան իհան քար կըլին...

Չարմացոտ աչերով, մաիկ կընենք բոլորս ալ:

ՍԷՔՍԷՆԻՆ ՏԱՐԻՆ

Մեզի կը պատմենթէ,

Ժամանակին երկու գիւղապետներ կան եղեր Կուռնոյ մէջ:

Հայերու մէկ մասը Ֆէթէն Աղայի, իսկ միւս մասը Աքիֆ Աղայի պաշտպանութիւնը կը վայելէն եղեր եւ ի վարձատրութիւն այս հողատարութեան, իւրաքանչիւր Կիւրիցի Հայ, իբր տուրք պարտաւոր է եղեր մէկ օխա իւղ տալ տարին...

Օր մը հայերը ալայօք քով քովի դալով, կ'որոշէն որ այլեւս եղ չտան Ֆէթէն Աղային, եւ ներկայացուցիչներ կը ճամբեն որ Աղային հազարէն էրէց ընշումը...

Ֆէթէն Աղան կուսէլով հայերու այս նպատակը, բարկացոտ եւ անարգական խօսքերով կընդունի այցելուները, եւ կը հարցնէ թէ ի՞նչ կուզեն:

Ներկայացուցիչներու լեզուն կը կապուի ու չեն կրնար անմիջապէս պատասխանել, թուրքին բարկութենէն սարսափած: Բայց մէջերնէն մէկը խելացի դանուելով, խնդրը անուշի կը կապէ, ըսելով.-

..... Էֆէնտի, մենք եկանք հարցնելու, թէ այս տարի եղը հալած բերենք թէ չհալած...

Թուրքը քթին տակէն կը խնդայ, բայց իր բարկութիւնը պահած ձեւացնելով, կը յանդիմանէ հայերը եւ ճամբու կը դնէ, ըսելով,

.-Գացէք եւ հալած եղ բերէք.....

Այս պզտիկ օրինակը կը ցուցնէ թէ՛ հայութիւնը ո՞ր աստիճանի միամիտ, վախկոտ ստրուկ մ'է եղած ժամանակին թուրք աղաներու լուծին տակ, որոնց ըսածը ըսած, դրածը դրած է եղեր միշտ, ասանց արդարութիւն կամ իրաւունք նախելու: Բայց անհաս հայեր ալ գտնուած են, որոնք համարձակ ու անվախ հայու ոգիով մը գիտցած են չափուի թուրքին դէմ եւ մեծ ազդեցութիւն թողած են թուրք աղաներու վրայ:

.-Էս էրեկն ու կնիկը, --կը շարունակէ էձէս.- ջաղանին կառնին, հացին տախտակն ու օխաղուն է հետերնին, տունէն տուրս կելլին կերթան լեռը. լեռը որ կը հասնին, ալայով քար կը կըլին կը մնան:

Կուռնայ շուկայէն Եաշտէփէն երթալու ճամբուն վրայ Ֆարման Մահլէի մօտերը բլուրի մը կողքին բարձր եւ սրածայր ժայռ մը կար ցցուած, որուն գագաթը մի քիչ նմանութիւն ունէր մարդու երկու գլուխներու, իսկ վրան ծուռ ու մուռ ցցուած քարի շերտերը կարելի էր նմանցընել տեսակ տեսակ պատկերներու: Այսպէս մեզի բացատրէր էին թէ այդ է Քարէմանուկը, իր կնիկը, գաւակը եւ հացին տախտակը ու օխաղուն հետերնին, եւ թէ ինչպէս քար էին դարձեր շատ տարիներ առաջ:

Ամէն անգամ այդ ճամբէն անցնող մը պիտի տեսնէր Քարէմանուկը հոն, աւանդական այդ առասպելը, գլուխը ցըցած երկինք, գղջումի մը նայուածքով կարծես, միշտ յիշեցնելու համար մեղքը... .

.-Քա աղայ, հացին փշուրը մի կոխիր, քար կը կըլիս...

Կ Ո Ւ Ի Ի Ն

Կուռին, Կուռին, Կարօտն ունինք թու անունին. Էքիներուդ մէջ կորսուող ձերմակ, կարմիր ծեփով տունին....

Մարան ունինք Ակին ջուրին, Արագահոս առուններուդ, Կաւառներուդ՝ կել կել կել կել Երգը կուզենք որ միշտ լսուին....

Ոլոր մոլոր, դարձար դարձեր ճամբաներդ դեռ չենք մոռցեր, Նեղ մէկ փայտով կամուրջներդ Դպրոց տանող Կամ Չախճորի եկեղեցին հանապազօր, Շատ ենք անցեր, շատ ալ վախցեր Երբ գետն յորդեր, Սէլ է եկեր, Կամուրջն տարեր...

(Շարունակելի)

ԽՏՐԵՆՑ ԿՐԸ

Տե՛հո՛՛ Տե՛հո՛՛ . . .

Աստու՛ր Կանուխ կը շատի հովիւին հոգիս: Ամէն տուն արտուէն դուրս կը ըլլի անո՛ւմար: Աշխարհ կամ այժմ կը թափուին դուրս փողոց, միանալու հօտին: Հոս փեղ կը տանի զանո՛ւք դէպի լուս, արածելու եւ երթիւտան վերադարձնելու համար տուն:

Աշխարհները հլու, հնազանդ կը լսեն հովիւին հղանախաւօր ծայրը եւ կարծես ըմբռնելով նշանակութիւնը, կրն՞թանան դէպի անձա՛ք: Բայց այժմերը կարծես բնականէն շար ստեղծուած արարածնե՛ր՝ երբէք հովիւին չեն անդար:

Իտիրենց Հաճիմօր այժը, իր այժութեան ամէն մի շարութեամբ, բոլորին գլխուն կատարեալ փորձանք մ'եղած էր: Հօտին հետ երբէք չէր ընկերանար, կը վազէր այս ու այն կողմը, ճամբէ դուրս, փողոցի մը անկիւնը դիզուած աղտոտութիւնը կը լափէր, պատերուն վրայի բարերը կը թափէր վար եւ կամ բաց դռնէ մը ներս սպրդելով՝ սէքին ցանուած ուրհանը ու ծաղիկները կը փճացնէր, անշուշտ իրեն հետեցնելով իր նմանները . . .

Այս անսովոր անկարգութիւններուն պատճառով, առակի կարգ անցած էր Հաճիմօր այժը:

—Իտիրենց էծուն պէս գլուխը մի առնիր տէ երթար . . . կրսէին:

—Հաճիմէր, ըսաւ Եղօ՞ Էմմին, հովիւր, —սա ձեր էծուն կլոխը փորձանք մը պիտի դայ օր մը չէ օր մը ամմա, հէլէ հօ, աշխարհ մը ձեր էծը իտի կօ . . .

—Քաւ Եղօ Էմմի, պատասխանեց Հաճիմէրը, —Քա ի՞նչ ընենք, անլեզու հայվան է, կլոխն ուտէ, մենք է ելմիչ էղանք սա էծուն ձեռքէն . . . Աղջիկ, Աղջիկ, ձայնեց դռնէն ներս նայելով, —Եղօ Էմմուն կովլակը բեր, փելլալին եղը շատ լեցուր եւ քիչ մ'ալ կէնէնչ սոխ գիր հետը . . . եւ դպունալով հովիւին, —Ղատատ աննիմ Եղօ Էմմի, քիչուկ մը լաւ աչքով

նայիր մի կէծուն . . . աւելցուց Հաճիմէրը:

Երտակը Եղօ Էմմին Հաճիմօր խաթրը կը համբէր ու կը համբերէր:

Օր մը Իտիրենց էծը փողոցներու մէջ ըրած իր անկարգութիւններէն չբաւականաւորով՝ նոր միջոց մը գտեր էր հօտէն հեռանալու ու իր անթիփ փորը թարմ կանաչով կշտացնելու համար: Ղլաւ էծէին բանջարը շատ համով էր եկեր իր ախորժակին: Քանի մը անդամ պատին մը բայ բարձրացեր էր պոստանը մտնելու համար, բայց վար ընկեր էր քար ու հող թափելով բանջարանոցը: Եղօ Էմմուն չի տեսած կողմէն կրկին բարձրանալու վարձ ընելու ժամանակ, պատը կը փլուէ կլոխով ու Ղլաւ էծէին կանաչ մաշարանները հողի ու քարի տակ կը կորսուին: Մտովի դրացիներ տեսնելով եղածը, կը կանչէ կէս մը հեղնանքով,

...Ղլաւ, Ղլաւ,
Պատը փլաւ,
էծը բանջարը կերաւ . . .

Ղլաւ էծէն բարեւերտ կիներէն չէր, եւ երբ օրհնեալ բերանը բանար՝ սամոզ թաղը գլուխը հաւաքելու կը բաւէր:

Իտիրենց էծուն ըրածը չափը անցած էր այլեւս: Ղլաւ էծէն իր օրհնեալ բերանը բանալէ վառ թոնիքին օրհնեալ էկիւն ալ հետը վազեց պոստանը . . .

—Քու տիրոջդ բերանը շանը ք . . . կը դնեմ եւ քու էտի ոտքդ խմուխուչ չընենք ինձի Ղլաւ թող շատին, ըսելն ու էկիւն փարտելը մէկ եղաւ . . .

Հաճիմէրը կուրի երթալու չհամարձակեցաւ. բաւականացաւ ձէնսուց ծխսուղ իր էծուն կտորով ոտքն ու պատանոց փորը խնամելով: Վերը ծանր էր պէտք է մորթուի, կրսէին:

—Ես քեզի շատի՞, Հաճիմէր, ինչ է՛նք էղածը եղած է, մի հոգար, — Եղօ Էմմին էր խօսողը:

Տարիներ անցեր են, բայց դեռ կը յիշուի Իտիրենց էծուն օրինակը: